Azg
armenian daily

5 ՄԱՐՏ 2004 ՈՒՐԲԱԹ 39 (2964)

Տարածաշրջանային համագործակցության հաստատման հանգույցը Ղարաբաղյան հակամարտության կարգավորումն է

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 4 ՄԱՐՏ, ԱՐՄԻՆՖՈ: Հարավային Կովկասում լարվածության թուլացման եւ տարածաշրջանային համագործակցության նոր հնարավորությունների հայտնաբերման հանգույցը Ղարաբաղյան հակամարտության կարգավորումն է: Այդ մասին հայտարարել է ԱՄՆ պետքարտուղարի եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալ Էլիզաբեթ Ջոնսը՝ ելույթ ունենալով ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեի նիստին:

ԱՄՆ պետդեպարտամենտի հաղորդագրության համաձայն՝ Էլիզաբեթ Ջոնսը նշել է, որ պատասխանատու Վաշինգտոնը շարունակում է իր միջնորդական առաքելությունը որպես Ղարաբաղյան հակամարտության ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ: Նրա խոսքերով, Հայաստանի եւ Ադրբեջանի նոր ղեկավարությունը կկարողանա դուրս գալ փակուղուց միայն փոխզիջման ապահովման դեպքում, ինչն անհրաժեշտ է ղարաբաղյան հակամարտության խաղաղ բանակցությունների համար:

Հայրենիք վերադառնալու հնարավորություն արտերկրում գտնվող զինապարտների համար

Պաշտպանության նախարարությունը ցանկանում է, որ ժամանակին (սկսած 1992 թ.) պարտադիր զինվորական ծառայություն չանցած եւ արտերկրում գտնվող Հայաստանի քաղաքացիները վերադառնան հայրենիք: Այս մասին երեկ ասաց պաշտպանության փոխնախարար Արթուր Աղաբեկյանը, լրագրողներին ներկայացնելով կառավարության որոշումը «Պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների դիմումների կարգի մասին»: Նա նշեց, որ այս որոշումը վերաբերում է Հայաստանից դուրս գտնվող մոտ 5 հազար երիտասարդներին: Սակայն նրանք պետք է որոշակի գումար վճարեն այդ հնարավորությունից օգտվելու համար: Փոխնախարարը տեղեկացրեց, որ փոխհատուցման համար կիրառվելու են տարբեր գործակիցներ՝ 0-ից մինչեւ նվազագույն աշխատավարձի (1000 դրամի) 200-ապատիկը: Զրո գործակիցը կկիրառվի ամուսնացած եւ արդեն երկու երեխա ունեցողների համար: Առավելագույն գումարը 9 տարվա 18 զորակոչերից խուսափելու դիմաց կարող է լինել 18 անգամ 200 հազար դրամ, այսինքն 1 մլն 800 հազար դրամ գումարը:



Արթուր Աղաբեկյանը այն կարծիքը հայտնեց, որ վերոնշյալ 5 հազարից մեծ մասի համար վճարվող գումարները խորհրդանշական կլինեն: Այդ գումարները կուղղվեն պայմանագրային զինծառայության խրախուսմանը:

Մեր հարցը պաշտպանության փոխնախարարին առնչվում էր «Զինապարտության մասին» օրենքը հետ վերցնելուն: «Ինչո՞ւ ուսանողների համար բացառություն պետք է արվի զինծառայություն անցնելու առումով» հարցին Արթուր Աղաբեկյանը պատասխանեց, որ ուսանողների այդ դիրքորոշման համար «պաշտպանության նախարարությունը ցավ արտեց»: Այս օրենքի նախագիծը լրամշակելուց հետո կներկայացվի հասարակության քննարկմանը:

Ա. Մ.

ՀԱԿԻՐՃ

«Բանակցությունները եղել են եւ կլինեն փակուղում

ԼՂՀ նախագահի մամլո ծառայության ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանն «Առկա» գործակալությանը տված հարցազրույցում ասել է, որ ղարաբաղյան բանակցությունները եղել են փակուղում, այսօր էլ փակուղում են եւ առաջում էլ կլինեն փակուղում, քանի դեռ Ստեփանակերտը եւ Բաքուն տարբեր խնդիրներ են լուծում:

«Մենք լուծելու ենք Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման խնդիրը, ադրբեջանցիները՝ իբր Հայաստանի կողմից Ադրբեջանի նկատմամբ ագրեսիայի հետեւանքների հաղթահարման հարցը, իսկ միջազգային միջնորդները կշարունակեն փորձել համաձայնեցնել անհամաձայնելին», ասել է Գրիգորյանը:

ԵԱՀԿ նախագահը կայցելի Հարավային Կովկաս

ԵՐԵՎԱՆ, 4 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԵԱՀԿ գործող նախագահ, Բուլղարիայի արտգործնախարար Սոլոմոն Պասին մարտի 16-ին կժամանի Հարավային Կովկաս: Ըստ «Թուրան» գործակալության, տարածաշրջանային այցը նույն օրը նա սկսելու է Թբիլիսիից, ապա կայցելի Բաքու եւ Երեւան:

Ջորջ Բուշը 200 մլն դոլար կծախսի վերընտրվելու համար

Մ. Նահանգների առաջիկա նախագահական ընտրություններում վերընտրվելու համար նախագահ Ջորջ Բուշ կրտսերը ծախսելու է շուրջ 200 մլն դոլար, որն ավելին է, քան Մեծ յոթնյակի մյուս երկրների ու Ռուսաստանի ներկայիս ղեկավարների ընտրության համար ծախսված գումարները միասին վերցրած: Մ. Նահանգներում միշտ այսպես է՝ թեկնածուն պետք է կամ ինքը հարուստ լինի, կամ բարեկամները: Իսկ Բուշը թե՛ ինքն է հարուստ եւ թե՛ հարուստներով է շրջապատված:

Համենայն դեպս, ներկա դրությամբ նախագահ Բուշի վերընտրվելու հավանականությունը շատ մեծ չէ, քանզի ոչ միասնական թքնոլորտ է տիրում Հանրապետական կուսակցության ճամբարում: Մինչդեռ ընդհակառակը, Դեմոկրատական կուսակցության շարքերն այսօր առավել կուռ են բոլորված թեկնածու Ջոն Քերի շուրջ. նրանց գլխավոր խնդիրը Բուշին պարտության մատնելն է:

Հայկական մթնոլորտ Ռուսաստանի դեսպանատանը

Թեհրանի մշակութային միության կազմակերպած համերգը նվիրված կանանց

Խորհրդային տարիներից մեզ փոխանցված կանանց միջազգային տոնը՝ Մարտի 8-ը, սովորութային խոր արմատներ է ձգել, եւ այսօր էլ հաճույքով շարունակում ենք նշել: Թերեւս սա պայմանավորված է տոնի խորհուրդներով, որպես գարնան առաջին տոնի եւ կանանց նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի որ:

Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատանը Մարտի 8-ի տոնի առիթով կանանց շնորհավորանքները սկսեցին մի փոքր վաղ: Երեկ դեսպանատան համերգային դահլիճում Հայաստանում ՌԴ դեսպանության նախաձեռնությամբ եւ Թեհրանի մշակութային միության կազմակերպությամբ տեղի ունեցավ տոնական համերգ: Դեսպանը՝ Անատոլի Դոյլուկովը զգացմունքային, շատ գեղեցիկ խոսքեր հղեց դահլիճում նստած հանդիսականին՝

վորված է տոնի խորհուրդներով, որպես գարնան առաջին տոնի եւ կանանց նկատմամբ յուրահատուկ վերաբերմունքի որ:

Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատանը Մարտի 8-ի տոնի առիթով կանանց շնորհավորանքները սկսեցին մի փոքր վաղ: Երեկ դեսպանատան համերգային դահլիճում Հայաստանում ՌԴ դեսպանության նախաձեռնությամբ եւ Թեհրանի գարնանային երեւանյան օրվա սքանչելի թեթեւությամբ, եւ համաձայն էլ չէր ընդունված այն կարծիքին, թե տղամարդիկ տարվա մեջ միայն մեկ օր են կանանց շնորհավորում կամ հատուկ ուշադրություն դարձնում: Իհարկե, հայ կանայք այս առիթով էլ շահեկան վիճակում են, քանի որ այստեղ՝ Հայաստանում երկու տոն նվիրված է կանանց:

Տես էջ 6

«Ադրբեջանցիները եւ վրացիները միասին կարող են հրաշքներ գործել»

Սաակաշվիլին Բաքվում Ալիեւից սովորում է, թե ինչպես հարեւանների հետ լավ հարաբերություններ հաստատել

Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլու օդանավը Բաքվում վայրէջք կատարելուց մոտ մեկ ժամ առաջ «Բինա» օդանավակայանում տեղի է ունեցել ավիավթար: Անկարայից Քաբուլ մեկնող «ԻԼ-76» բեռնատար օդանավը լիցքավորվելուց մի քանի վայրկյան անց կործանվել է եւ հրդեհվել օդանավակայանում:

Մեկ ժամ անց «Բինայում» բարեհաջող վայրէջք է կատարել Վրաստանի նախագահի օդանավը: «Ես Բաքու եմ եկել հատուկ զգացմունքներով, քանի որ մեր երկու ժողովուրդների միջեւ կան հատուկ հարաբերություններ եւ ավանդույթներ: Մենք միասին կարող ենք հրաշքներ գործել», Սաակաշվիլու խոսքերը մեջբերում է «Նովոստին»:

Իլհամ Ալիեւի հետ բանակցություններից հետո տեղի է ունեցել վրաադրբեջանական ընդլայնված կազմով նիստ: Ստորագրվել են երկու պայմանագրեր՝ տեղեկատվության եւ կրթության ոլորտներում համագործակցության մասին, Սաակաշվիլին եւ Ալիեւը ստորագրել են «Ադրբեջանի եւ Վրաստանի համատեղ հռչակագիրը», ապա տեղի է ունեցել երկու երկրների նախագահների համատեղ մամլո ասուլիսը: «Ադրբեջանի եւ Վրաստանի տնտեսական հարաբերությունները չպետք է սահմանափակվեն միայն էներգակիրներին վերաբերող նախագծերով:

Տես էջ 8

ՎԱՆԴԱԼԻԶՄ

Միտումնավոր պղծել են հենց հայերի գերեզմանները

Ռուսաստանի հարավի հայերի «երկրամաս» թերթը տեղեկացնում է, որ Կրասնոդար քաղաքի սլավոնական գերեզմանատանը մարտի 1-ի լույս 2-ի գիշերը հայերի գերեզմանները պղծել են միտումնավոր: Ընտրվել եւ ավերվել են հայերի գերեզմանների մոտ 10 հուշարձանները: «Արդեն հայտնի է դարձել, որ բարբարոսները գերեզմանները պղծել են ընտրովի», հայտնել է Կրասնոդար քաղաքի սլավոնական միկրոշրջանի ոստիկանության բաժանմունքի պետ Պավել Կորոտենկոն: Նրա հաղորդած տեղեկության համաձայն, բարբարոսների խումբը շարժվել է Կարմիր պարտիզանների փողոցի ուղղությամբ եւ ջարդել հուշարձանները: Իրավապահպան մարմինները չեն բացառում, որ դրանք եղել են հարբած երիտասարդներ, որոնք այդ բարբարոսությունը կատարել են գիտակցաբար: Դեպքի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ՝ խուլիգանության

համար սահմանված հոդվածով, ներկա պահին անցկացվում են օպերատիվ հետախուզական միջոցառումներ:

ԸՆԹԱՑԻԿ

Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ «Կանանց հանրապետական խորհուրդը» երեկ կլոր սեղան էր հրավիրել, որին մասնակցում էին կանանց հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, կառավարության անդամներ, փորձագետներ: Կառավարության մշակած «Հայաստանի Հանրապետությունում կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման 2004-2010 թթ. ծրագիրը» դեռ չի հաստատվել, սակայն խորհուրդն արդեն երկրորդ քննարկումն է անցկացնում: Ի տարբերություն առաջինի, որին մասնակցում էին քաղաքական կուսակցությունների կին ներկայացուցիչները, երկրորդ քննարկումն ավելի մեղմ էր, առանց պաթետիկ խոսքերի, հավակնոտ ելույթների: Այս անգամ էլ ներկայացվեց Հայաստանի կանանց վիճակի վերլուծությունը, որից հետո խոսվեց գենդերային հավասարակշռության հասնելու քաղաքականության, խաղաղասիրական գործընթացներում կանանց մասնակցության եւ այլ հարցերի մասին:

Նախորդ ծրագրի (1998-2000 թթ.) տարալուծից հետո կին հասարակական գործիչները որոշել են միաբանվել, որպեսզի կառավարության մշակած այս ծրագիրն էլ չդառնա ծեւական ու անպտուղ: Նրանք լավ գիտեն, որ կանանց նկատմամբ մեր քաղաքական գործիչների ցուցաբերած բարեհաճության տակ թաքնված են խորապես արմատացած անվստահությունն ու քմահաճությունը: Մինչդեռ հենց խոհեմությամբ աչքի ընկած կանայք են ընդունակ իրականացնելու կրթական բազմազան ծրագրեր, բարձրացնելու հասարակության քաղաքական գիտակցությունը, նպաստելու տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Վերջին հարցին անդրադառնալիս կլոր սեղանի մասնակիցները մտահոգություն հայտնեցին Հունգարիայում տեղի ունեցած արյունալի դեպքից հետո ադրբեջանական մամուլում հրապարակված նյութերի համար, որոնք ոչ թե դատապարտեցին, այլ սատարեցին մարդասպանին: Կանայք առաջարկեցին, որ մեր մամուլում զգացմունքային հրապարակումների եվ դա նրանց հաջողվում է, քանի որ ծեւավորվում է հասարակական կարծիք հօգուտ իրենց», ասաց «Հանուն մարդկային կայուն զարգացման» հասարակական կազմակերպության նախագահ Կարինե Դանիելյանը:

Քննարկման վերջում տարբեր կարծիքներ հնչեցին մարտի վերջին Վրաստանում կայանալիք «Հարավային Կովկասում խաղաղասիրական գործընթացներում կանանց դերի բարձրացմանը» նվիրված համաժողովին հայ կանանց մասնակցության վերաբերյալ: Հայաստանից հրավիրված են 15 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնցից շատերը մտավախություն ունեն, թե ադրբեջանցի կանայք համաժողովի ժամանակ հանդես կգան սադրիչ հայտարարություններով՝ ներկայիս լարվածությունն էլ ավելի շիկացնելու միտումով: Տկն Հասրաթյանն առաջարկեց հրաժարվել մասնակցելուց, քանի որ Ադրբեջանի ոչ մի հասարակական կազմակերպություն չդատապարտեց Հունգարիայում տեղի ունեցած ահավոր սպանությունը: Եղան նաեւ այլ կարծիքներ:

Ռ. Պ.

Կին հասարակական գործիչները որոշել են միաբանվել

Գոնե նրանց դա կհաջողվի՞



Պետհամալսարանում դասախոսների կարծիքները հանրակրթության նոր կրթակարգի վերաբերյալ մերժողական էին

Երեկ Երեւանի պետական համալսարանում կրթության եւ գիտության նախարար Սերգո Երիցյանը հանդիպեց համալսարանի գիտխորհրդի անդամների, պրոֆեսոր-դասախոսական կազմի հետ: Հանդիպման հիմնական նպատակը «Հանրակրթության պետական կրթակարգի» նախագծի քննարկումն էր: Նախագիծը ներկայացրեց կրթական հեղինակային խմբի ղեկավար Կարեն Մելքոնյանը:

Սկզբում ԿԳ նախարարը ներկայացրեց կրթական համակարգում գործող օրենսդրությունը, արդեն ընդունված օրենքները, նոր նախագծերը: «Հանրակրթության պետական կրթակարգ»-ը ենթադրում է փոփոխություններ հանրային ողջ կրթության բնագավառում՝ 12-ամյա կրթություն, նոր առարկայացանկ եւ այլն:

«Մենք փորձել ենք սահմանել շրջանավարտի մի իդեալ, որին պետք է հասնենք տարիների ընթացքում՝ հաշվի առնելով, որ յուրաքանչյուր սովորող ունակ է սովորելու, պարզապես հարկավոր է նրան սովորեցնել», ասաց կրթակարգի հեղինակային խմբի ղեկավար Կարեն Մելքոնյանը:

Նոր կրթակարգը ուսումնասիրվել եւ քննարկվել էր պետհամալսարանի բոլոր ֆակուլտետներում, արվել էին դիտողություններ եւ առաջարկություններ, որոնք էլ համահավաք տեսքով ներկայացրեց ԵՊՀ մանկավարժական ամբիոնի վարիչ Նազիկ Հարությունյանը: 37 դիտողություններն ու առաջարկները, որ ներկայացրեց տիկին Հարությունյանը, կրթահամակարգի բազում դրույթներին էին վերաբերում: «Գիտամանկավարժորեն չի հիմնավորվում 10-ամյայից 12-ամյա կրթակարգի անցման անհրաժեշտությունը, այն դիտվում է որպես իրողություն, մինչդեռ ակնհայտ է, որ ուսման տեւողությունը պետք է ածանցված լինի ուսման բովանդակությունից, սակայն այս դեպքում հակառակն է արվում», ասաց նա:

Եղան նաեւ ելույթներ: Այս նոր կրթակարգին անցնելու համար Համաշխարհային բանկը 19 մլն դոլարի վարկ է տրամադրել: Դասախոսները ծրագիրը որակեցին պարզապես եղած գումարները ծախսելու միջոց: Ներկաները անընդունելի էին համարում մինչեւ 7-րդ դասարան հայոց լեզու եւ գրականություն առարկաները որպես մեկ առարկա անցնելը: Բացասական էր գնահատվում նաեւ այն փաստը, որ ծրագրերից դուրս են մնացել հայ եկեղեցու պատմությունը, իրավագիտությունը, չէր ընդունվում 6 տարեկանից դպրոց հաճախելու տեսակետը:

Վարդան Բոստանջյանը կարծիք հայտնեց, որ ծրագիրն այնքան թերություններ ունի, որ բարեփոխումներ անել հնարավոր չէ, պարզապես հարկավոր է նորը գրել: Դասախոսներից մեկն էլ ասաց, որ այս փաստաթուղթն իրականացման որեւէ լծակ չունի:

Սերգո Երիցյանը գոհ էր, որ համալսարանում քննարկումը խիստ կառուցողական էր: «Մեր յուրաքանչյուր հանդիպման ժամանակ մոտավորապես այսպես դիտողություն լինում է, սակայն ակնհայտ է, որ յուրաքանչյուր առաջարկություն պետք է քննարկվի համատեքստի մեջ», ասաց նա:

Մյուս հինգշաբթի փաստաթուղթը ներկայացվելու է կառավարություն: Պրն Երիցյանը նախատեսում է մինչեւ մարտի վերջ ավարտել նոր կրթակարգի քննարկումները, սակայն նաեւ նշում է, որ ցանկացած ժամանակ հնարավոր է այնտեղ փոփոխություններ անել: «Առաջիկա ամսվա ընթացքում կրթակարգը հաստատելով՝ մոտ 2 տարի ժամանակ ենք ունենում նախապատրաստական աշխատանքները կատարելու, ենթաօրենսդրական ակտերը ընդունելու համար, իսկ 2006-07-ին կանցնենք նոր կրթակարգին», ասաց նա:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լրագրողների հավատարմագրման նոր կարգ

Երեկ կառավարության հաստատած «Պետական մարմիններում լրագրողների հավատարմագրման կարգի» մասին մանրամասներ հաղորդեց արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանը: Նրա հավաստմամբ այս կարգը լրագրողների համար որեւէ սահմանափակում չի նախատեսում, ընդհակառակը՝ պետական մարմինների համար լրացուցիչ պարտավորություններ է պարունակում: Մասնավորապես նախատեսվում է, որ յուրաքանչյուր նախարար առնվազն տարին երկու անգամ մամուլի ասուլիսով հանդես գա, իսկ նախարարությունը 2 ամիսը մեկ անգամ տեղեկություններ տարածի իր գործունեության մասին: Պետական մարմինն իրավունք չունի գրաքննություն անցկացնելու: Նա պարտավոր է տեղեկություններ տրամադրել հավասարապես բոլոր լրատվամիջոցներին: Այսինքն խտրական միջոցների չդիմել:

Նախարարը նաեւ տեղեկացրեց, որ պետական մարմիններում հավատարմագրումը կատարվում է 1 տարի ժամկետով, 5 օրվա ընթացքում: Լրագրողը կարող է զրկվել հավատարմագրից 5 դեպքերում՝ երբ անձը դարձել է անգործունակ, դատապարտվել է դատարանի վճռով, լրատվամիջոցը դիմել է լրագրողի հավատարմագրումը դադարեցնելու խնդրանքով, լրատվամիջոցը դադարեցրել է իր գործունեությունը, երբ լրագրողը տարածել է այնպիսի տեղեկություն, որը դատարանի կողմից օրինական ուժի մեջ մտած որոշման համաձայն իրականությանը չի համապատասխանում: Այնուհետեւ յուրաքանչյուր լրատվամիջոց իրավասու է հավատարմագրել երկու լրագրողի եւ երկու օպերատորի (հեռուստաընկերության համար): Սակայն միջոցառմանը իրավասու է մասնակցել միայն մեկը: Միջոցառումից դուրս տվյալ պետական մարմին մուտք գործելու համար լրագրողը պետք է դիմի համապատասխան (լրատվական) ծառայությանը: Յուրաքանչյուր լրագրող իրավունք ունի հավատարմագրվելու բոլոր պետական մարմիններում: Պետական մարմինը պարտավոր է հավատարմագրված լրագրողին տեղեկություններ տրամադրել առանց նրա պահանջի, չհավատարմագրված լրագրողին այդ տեղեկությունները կտրամադրվի միայն նրա պահանջի դեպքում:

Նոր որոշումը կարծես թե առանձնապես ոչ մի նոր բան չի ասում, սակայն բավականին լայն հնարավորություններ է ընձեռում հավատարմագրման հետ կապված թղթաբարության եւ քաշքշուկների համար:

Պետպատվերի շրջանակներում կընդգրկվի նոր սոցիալական խումբ

Առողջապահությանն այս տարի հատկացվել է 4 մլրդ դրամով ավելի գումար, քան նախորդ տարի, կազմելով 25 մլրդ դրամ: Կառավարության որոշմամբ, հավելյալ գումարի շնորհիվ ավելացել է պետպատվերի շրջանակներում բուժման գինը՝ կազմելով օրական 8300 դրամ նախկին 7300 դրամի փոխարեն: Բացի այդ, պետպատվերի մեջ ընդգրկվել է եւս մեկ լրացուցիչ սոցիալական խումբ՝ զինծառայողները եւ նրանց ընտանիքները: «Ազգի» հարցին, թե ավելի նպատակահարմար չէ՞ր լինի հավելյալ գումարն ուղղել բուժման ծախսի եւ պետպատվերի տարբերության նվազեցմանը, քան թե նոր սոցիալական խմբեր ընդգրկել, կառավարության որոշումը ներկայացնող առողջապահության փոխնախարար Հայկ Դարբինյանը պատասխանեց, որ 1000 դրամով օրական գումարի ավելացումն այդ նպատակն է հետապնդում:

Առողջապահության փոխնախարարը, պատասխանելով լրագրողների հարցերից մեկին, տեղեկություն հաղորդեց «Արմենիկումի» մասին, ասելով որ փորձարկվում է նաեւ տուբերկուլյոզով հիվանդների վրա:

Ա. Մ.

Գրողների միության պոլիկլինիկայի դատը հետաձգվեց

Արաբկիրի թաղապետարանի կողմից անուղղակի վաճառված պոլիկլինիկային վերաբերող դատական նիստը տեղի ունեցավ երեկ, Արաբկիր-Քանաքեռ-Զեյթուն համայնքի առաջին ատյանի դատարանում: Մեկ ժամ տեւողությամբ դատական նիստի ընթացքում երկու կողմերը՝ հայցվորը (ՀԳՄ) եւ պատասխանողը (Արաբկիրի թաղապետարան) խնդիրը ներկայացրին ըստ իրենց տեսակետների: 155 քմ տարածքով 40 տարի ՀԳՄ-ին պատկանող պոլիկլինիկան ուներ մի քանի ծառայություններ (ատամնաբուժական, նյարդա-հոգեբանական, թերապեւտիկ, գինեկոլոգիական, ԷԿԳ-ի, նաեւ լաբորատորիա), որոնցից օգտվում էին միության անդամներն ու աշխատակիցները: ՀԳՄ-ի շահերը պաշտպանող դատախազությանը թաղապետարանի ենթակայության տակ անցած օբյեկտը սեփականաշնորհելու ցանկություն հայտնած ՀԳՄ ղեկավարության դիմումները շրջանցված եւ դրա անուղղային վաճառքը ապօրինի գործարք համարեց, քանի որ ՀՀ սեփականաշնորհման օրենսդրության 18-րդ կետի համաձայն, հիշյալ տարածքի սեփականատեր կարող էր դառնալ նախ եւ առաջ Հայաստանի գրողների միությունը, որովհետեւ 40 տարի հիշյալ օբյեկտը պատկանել է միությանը եւ միայն հրաժարվելու դեպքում կարող էր անուղղի հանվել: Դատապաշտպանի եւ գնորդի բացակայությունը հնարավորություն չտվեց լսելու հակառակ կողմի փաստարկները: Ուստի դատավոր Առաքելյանը նպատակահարմար գտավ նիստը հետաձգել մեկ շաբաթով՝ հնարավորություն տալով երկու կողմերին ներկայանալ համապատասխան փաստաթղթերով:

Արդեն ավանդույթ դարձած տարբեր դատական նիստերի ձգձգումները անորոշ հեռանկարներ են խոստանում: Ուստի փորձեցինք ծանոթանալ նիստին ներկա գրողների կարծիքներին:

«ՀԳՄ պահանջն արդարացի էր, տեղի էր ունեցել կողոպուտ, անօրինական սեփականաշնորհում այն դեպքում, երբ ՀԳՄ-ն ամիսներ առաջ հայտ է ներկայացրել, որ ինքը պատրաստ է այդ տարածքը վերցնելու: Շատ թափանցիկ է, որ թաղապետարանն անձնական, նյութական շահեր է հետապնդել» (Նորայր Ադալյան):

«Տեղի է ունեցել ապօրինի գործարք: Եվ կարծում էինք, որ հնարավոր էր հարցի արագ լուծում, սակայն նիստը հետաձգվեց՝ պատճառաբանելով, թե մյուս կողմը պատրաստվելու ժամանակ չի ունեցել: 155 քմ տարածքը 8.000 դոլարով վաճառել, այն էլ՝ քաղաքի կենտրոնական մասում, նշանակում է, որ բացահայտ կողմնապահություն է եղել: Քաշքշուկն այնպիսի արմատներ է ձգել, որ ամենապարզ հարցերն անգամ չեն լուծվում: Իզուր չէ, որ գրողներից մեկն ակնարկեց, թե այս հասարակ գործը մեկ տարի կձգվի: Իսկ պոլիկլինիկան 40 տարի ծառայել է գրողներին, տարիով, հիվանդ մարդիկ կան, որոնց անհրաժեշտ է...» (Մարգո Ղուկասյան):

Մ. Բ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Հաշիվ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
հանդակարգային շարուածք
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Բիզնեսը պետք է մասնակցի սոցիալական խնդիրների լուծմանը

Պետական եւ մասնավոր ոլորտների համագործակցությանն էր նվիրված երեկ «Արմենիա» հյուրանոցում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) եւ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) կազմակերպած գործարար համաժողովը: Քննարկվող հարցերի շրջանակն ընդգրկում էր Հայաստանի բիզնես միջավայրի, աղքատության, տնտեսական աճի խթանման, առողջապահության եւ բնական միջավայրի ոլորտները: Առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Տիգրան Դավթյանի եւ Հայաստանում ԱՄՆ դեսպան Ջոն Օդոուելի ներածական ելույթներից հետո ՄԱԿ-ի մշակական համակարգող Լիս Գրանդեն անդրադարձավ ՄԱԿ-ի 2000 թ. սեպտեմբերին գումարված հազարամյակի գագաթաժողովի ժամանակ 191 երկրների սանձնած պարտավորություններին, մասնանշելով այն խնդիրները, որոնք պետք է լուծվեն աշխարհում եւ Հայաստանում: Մասնավորապես նա ընդգծեց այն փաստը, որ չնայած բարձր տնտեսական աճին, «աղքատությունը Հայաստանում դեռեւս չի նվազել գոնե այնքան, որքան ակնկալում էինք»: Հարյուր հազարավոր մարդկանց աղքատության սահմանագծից ցած գտնվելը նա պատճառաբանեց գործազրկությամբ եւ ցածր վարձատրվող աշխատանքով: ՄԱԿ-ի մեկ այլ պատասխանատուի՝ ավագ խորհրդական Փուրնակա դե Սիլվայի ելույթն առնչվում էր կազմակերպության ղեկավար Կոֆի Անանի նախաձեռնած Գլոբալ պայմանագրին, որը կոչված է միավորելու ընկերություններին, կառավարություններին, միջազգային կազմակերպություններին մարդու իրավունքների, աշխատանքային չափանիշների եւ բնապահպանության ոլորտում միջազգայնորեն ընդունված 9 սկզբունքների շուրջ:

Համաժողովին Հայաստանի մասնավոր եւ պետական ոլորտները ներկայացնում էին համապատասխանաբար Հայաստանի գործարարների եւ արդյունաբերողների միության (ՀԱԳՄ) նախագահ Արսեն Ղազարյանը ու առեւտրի եւ տնտեսական զարգացման փոխնախարար Տիգրան Դավթյանը:

Մասնավորի եւ պետականի համագործակցությունը ամենօրյա աշխատանք համարեց նաեւ Տիգրան Դավթյանը: Նրա համոզմամբ, մասնավոր հատվածն արդեն բավականին մեծ կապիտալ է կուտակել եւ կարող է մասնակցել երկրի աղքատության նվազեցման եւ այլ սոցիալական խնդիրների լուծմանը: Նման գործունեության միջազգային մոդելներ կան եւ փորձ կկատարվի գտնելու Հայաստանի համար առավել ընդունված տարբերակը: Փոխնախարարի կարծիքով, դա պետք է տեղի ունենա քայլ առ քայլ:

PHOTOLURE

Համաժողովին մասնակցում էին հայտնի գործարարներ՝ «Դի Սի էյ» եւ «Ջեյ Սի էյ» ընկերությունների նախագահ Գագիկ Աբրահամյանը, Երեւանի ոսկերչական գործարանի գլխավոր տնօրեն Էմիլ Գրիգորյանը, «Էյ Սի Փի» ընկերության նախագահը Վալերի Մեջլումյանը, Հայգյուղխոշգնության բանկի վարչության նախագահ Ստեփան Գիշյանը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Էլեկտրաէներգիայի զանգվածային անջատումներ գյուղական 15 բնակավայրերում

Էներգամատակարարները հոսանքի վարձը չվճարող բաժանորդներին պատժելու համար աշխատանքային նոր սկզբունք են որդեգրել, որ չվճարողների հետ համաձայնած խավարի է դատապարտում նաեւ վարձավճարները պարտաճաչորեն մուծած բնակիչներին: Ի լրումն այս իրողության, գյուղական բնակավայրերի մեծ մասում հոսանքը մատակարարվում է սանդարտների խախտումով՝ լարումը կամ բարձր, կամ ցածր է լինում:

Մասնավորապես, նման բողոք են հայտնել Արմավիրի մարզի մի խումբ գյուղապետներ «Օրինաց երկրի» ներկայացուցիչների մարզային այցի ժամանակ: Նման մարտավարություն, սովորաբար, կիրառվում է գյուղական բնակավայրերում, որտեղից սպառողի բողոքի ձայնն ավելի անլսելի է վերին աստիճաններին: Տվյալ դեպքում, անկախ քաղաքական շարժառիթներից, դեպի մարզեր կուսակցությունների արշավանքը գոնե այս իմաստով դրական տեղեկատվական գործառույթ է կատարում՝ բարձր ամբիոններից գյուղացուցավը գոնե հնչեցնելու հնարավորություն տալով:

Էներգետիկայի նախարար Արմեն Սովսիսյանի բացատրությամբ, նման բողոքներ իսկապես ստացվել են հանրապետության 10-15 բնակավայրերից: Իրավիճակը ուսումնասիրվել եւ պարզվել է, որ այդ բնակավայրերում բնակչության ընդամենը 10-15 տոկոսն է, որ հոսանքի պարտքեր չունի: Բաժանորդները բոլորովին պարտքեր չեն ունեցել ընդամենը 2 գյուղերում, բայց այստեղ էլ, այնուամենայնիվ, զանգվածային անջատումներ կատարվել են: Մնացած դեպքերում, ըստ նախարարի, անջատումները եղել են պայմանագրային պարտավորություններին համապատասխան:

Ինչ վերաբերում է մատակարարվող հոսանքի որակին, ապա նման երեւույթները բացառելու համար բաշխիչ ցանցերում մեծաքանակ ներդրումներ իրականացվելու խիստ անհրաժեշտություն կա: Շատ գյուղերում տարիներ շարունակ 140-160 վոլտից բարձր լարում չի ապահովվել: Ըստ նախարարի, այսօր ներդրումային աշխատանքներ կատարվում են, եւ ժամանակի ընթացքում վիճակը կփոխվի: Այսինքն, համակարգի օրինապահները սրբորեն կատարում են պայմանագրային այն կետը, ինչ ձեռնտու է իրենց՝ առանց սակայն պատշաճ որակի սպասարկում ապահովելու, ինչը նույնպես պարտադիր է պայմանագրային դրույթներով: Առավել եւս, եթե հընթացս տուժում են նաեւ վճարող սպառողները, որոնց մեղավորներից տարանջատելու եւ նրանց հետ միաժամանակ խավարի մեջ թողնելու որեւէ մեխանիզմ ոչ գործում է, ոչ էլ դրա մշակման փորձեր են արվում:

Խորհրդային հաշվիչներն աշխատում են սպառողի օգտին

Էներգահամակարգից սպառողների դժգոհության գլխավոր պատճառներից մեկը նաեւ հաշվիչների տարօրինակ վարքագիծն է: Սովորաբար լաբորատոր ստուգումներից հետո դրանք սկսում են անհամեմատ արագ պտտվել: ՀՀ էներգետիկայի նախարար Արմեն Սովսիսյանի բացատրությամբ, այդ հաշվիչները արտադրվել են 60-70 թվականներին, եւ ժամանակի ընթացքում դրանց համար հատկանշական է դարձել դանդաղընթաց աշխատանքը: Լաբորատորիաներում կարգի բերվելուց հետո սկսում են աշխատել իրական նորմայի սահմաններում: Էներգահաշվիչները տեխնիկական վիճակի բերելու կոչված լաբորատորիաները ամբողջությամբ մասնավոր կառույցներ են, որոնք աշխատում են պայմանագրային սկզբունքներով եւ էներգացանցերի, եւ ցանկացած սպառողի հետ: Այսինքն, անսարք հաշվիչները կարգի գցելիս խարդախելու շահ ու շարժառիթներ նրանք չունեն, ինչը սովորական երեւույթ էր այն ժամանակ, երբ դրանք գործում էին նախարարության ենթակայության տակ:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Նոր բարոյական հաղթանակի միտումներով

Արծարծվում է ավանդների վերադարձման խնդիրը

Ազգային ժողովում ներկայացված ոչ ընդդիմադիր բոլոր կուսակցությունների ներկայացուցիչներն էլ երեկ կայացած հերթական ճեպազրույցների ընթացքում պատասխանելով լրագրողների հարցերին եւս մեկ անգամ հավաստեցին, որ կողմ են ավանդները վերադարձնելուն, սակայն տարբեր են կարծիքները վերադարձման ծեւի եւ չափի հետ կապված: Հանրապետականներն, օրինակ, ավանդների վերադարձման ներկայիս սցենարին, Գալուստ Սահակյանի հավաստմամբ, կհամաձայնեն միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ ավանդների այս ինդեքսացիայի փոխհատուցումը կարող է նպաստել անհատի եւ երկրի տնտեսության զարգացմանը:

Հակառակ դեպքում կկարեւորեն թեկուզ ուշ, բայց ավելի մեծ ինդեքսացիայով ավանդները վերադարձնելու խնդիրը: Վերջին կետում հանրապետականների հետ համակարծիք են ՀՅԴ եւ «Ժողովրդական պատգամավոր» խմբակցությունները: Ավանդների վերադարձման համար օրինաբերկրականները որեւէ խնդիր չեն տեսնում, քանի որ հանձնաժողովի եզրակացությունը դեռ պետք է լրամշակվի եւ ամբողջացվի բոլոր խումբ-խմբակցությունների առաջարկությունների հիման վրա եւ արվի հնարավորինը, որպեսզի ավանդների վերադարձման ծեւից եւ չափից դժգոհելու որեւէ հիմք չունենա երկրի բնակչությունը:

«Օրինաց երկիրը» եւս մեկ անգամ ընդգծեց, որ ավանդների խնդիրը որեւէ կուսակցության սեփականաշնորհած գործը չէ, եւ պետությունը պարտավոր է մարել իր պարտքերը՝ գոնե ապահովելով խնդրի բարոյական կողմը: Իսկ ավանդը սանալ-չսանալու կամքը, բնականաբար, յուրաքանչյուր քաղաքացուն է պատկանում:

«Միավորված աշխատանքային կուսակցություն» խմբակցությունն էլ կարեւորեց ավանդների վերադարձման նշված չափին ժողովրդի վերաբերմունքը պարզելու խնդիրը, քանի որ պետությունը ավելորդ գումար չունի՝ դժգոհության ալիք բարձրացնելով այն բաշխելու համար: Իսկ հասարակության կարծիքը պարզելու խնդիրը խումբ-խմբակցությունների ներկայացուցիչները վերապահում են լրատվամիջոցներին:

Ավանդների խնդրով զբաղվող Աժ հանձնաժողովի նախագահի հավաստմամբ, մինչեւ մարտի 31-ը հանձնաժողովը կներկայացնի որոշման նախագիծ, որն էլ կնախանշի ավանդների վերադարձման վերջնական կարգն ու ինդեքսացիան:

Աժ ոչ ընդդիմադիր բանակը համակարծություն հայտնեց նաեւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման եւ պատերազմի հնարավորության առնչությամբ: Նրանք բոլորն էլ ընդգծեցին, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում որեւէ մեկը չի կարող մատնանշել ամենափոքր զիջում կամ նահանջ, իսկ պատերազմի վերսկսումը պարզապես անհնար համարեցին, քանի որ հայկական կողմի պաշտպանական գիծը չափազանց ամուր է, իսկ պատերազմ սկսելու դեպքում, փորձագետների գնահատմամբ, հակառակորդ կողմը կունենա մեծ քանակությամբ զոհեր, ինչը եւս Ադրբեջանին հետ կպահի պատերազմ հայտարարելուց:

Բացի «Օրինաց երկրից», երեկ ճեպազրույցի ներկայացած մյուս բոլոր խումբ-խմբակցությունների ներկայացուցիչները նշեցին, որ իրենք նպաստակահարմար չեն համարում պետականորեն տոնել զինադադարի լրացող 10-ամյակը, քանի որ զինադադարը վերջնական նպատակը չէ: «Օրինաց երկիրը» զինադադարը տոնելը կարեւորեց զոհերի հիշատակը հարգելու եւ արժանի տուրք տալու տեսանկյունից:

ՆԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՍԱԿ

Մինչեւ պետությունը հարստանա, մենք այլեւս չենք լինի

Մենք զառամյալ ու հիվանդ կենսաթոշակառուներս, անհամբեր սպասում էինք այն օրվան, երբ Ազգային ժողովը վերջապես կքննարկի սովետական խնայդրամարկղներում մնացած մեր ավանդները վերադարձնելու հարցը:

Այսօր ի վերջո եկավ այդ օրը, սակայն որոշ ղեկավար այրեր, հանձինս Գալուստ Սահակյանի եւ այլոց, ուզում են նորից «քաղել» այդ հարցը՝ առաջարկելով հետաձգել լուծումն անհայտ ժամանակով, մինչեւ որ պետությունը հարստանա, եւ մենք էլ չենք լինի: Մեզանից շատերն արդեն մահացել են, իսկ մնացածներին շատ քիչ ժամանակ է մնացել ապրելու, ուստի մի խումբ կենսաթոշակառուների անունից խնդրում ենք վերադարձնել մեր ավանդները, թեկուզ 1000 ռուբլի-30 դոլար հարաբերությամբ այս տարվանից, իսկ ովքեր համաձայն չեն, թող սպասեն մինչեւ Հայաստանը հարստանա, քանի որ «լավ է ունենալ լորը ծեռքում, քան թե կախվը՝ սարում»:

Մեր ռուբլիներով կառուցվել են հազարավոր գործարաններ, ֆաբրիկաներ, հյուրանոցներ, խանութներ, ուրեմն թող բարի լինեն դրա վաճառից գոյացած գումարը մեզ վերադարձնել:

Մենք պահանջում ենք վերադարձնել մեր ռուբլիները: Այդ հարցը լուծելու համար պահանջվում է միայն բարի կամք, իսկ դրամ կարելի է հայթայթել հազար ու մի եղանակով:

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Պատասխանը կլինի 3 օր անց

Մեր թերթի փետրվարի 24-ի համարում արդեն պատմել ենք «Հաղթանակ» զբոսայգու տարածքում «Մայր Հայաստան» հուշարձանին հարող անտառածածկ հատվածում, Կ. Ուլնեցի փողոցին կից, ոստիկանների մասնակցությամբ կատարվող շինարարական աշխատանքների մասին: Հիշեցնենք, որ բնակիչների տեղեկություններին համաձայն, այստեղ կանադական քաղաքաց է կառուցվում: Կառուցապատողը շինարարության թույլտվություն չունի: Բնակիչները ահազանգել են հնարավոր ամեն ատյան, սակայն մի քանի հա հողատարածքը կանաչազերծելու աշխատանքների թափը չի կոտրվում: Անխնա կտրվել են ոչ միայն հնամյա, այլեւ նորատունկ պտղատու ծառերը: Տեղի բնակիչները այս այգին հիմնել էին Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին: Տարեց բնակիչներից մեկը՝ Ատոս Գրիգորյանը, ավերված տարածքը տեսնելով՝ օրերս սրտի նոպա է ունեցել եւ հազիվ հասցվել հիվանդանոց:

Հուսահատ պայքարից հոգնած բնակիչները դիմել են նաեւ իրենց տարածքի պատգամավոր Մանուկ Գասպարյանին: Վերջինիս այս առթիվ հարցադրմանը տարածային կառավարման եւ ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը պատասխանեց. «Վարչապետի հանձնարարականով քաղաքապետը եւ համապատասխան գերատեսչությունների ղեկավարները խոստացել են 3 օրում հարցը մանրակրկիտ ներկայացնել կառավարություն», որից հետո գործողությունների ընթացքի մասին գրավոր կտեղեկացվի նաեւ անկախ պատգամավորը:

Այգու ճակատագրի շուրջ զարգացումներին շարունակելու է հետեւել **«Ազգը»**:

Կ. Գ.

ՃՇՏՈՒՄ. «Ազգի» մարտի 2-ի համարում տպագրված «Շնորհակալ եմ ողջ ռուս ազգից» հոդվածն իմ մեղքով պարունակում է սխալ փաստեր, այդ թվում՝ հայկական դեսպանատան վերաբերյալ, ինչի համար հայցում եմ խմբագրության եւ ընթերցողների ներողամտությունը:

ՕԼԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ազգային

Հանրային կրթությունը դարձյալ մոլոր ուղենիշ-կրթակարգերում

Շարունակվում են Միության փլուզումից հետո հանրային կրթության ոլորտում սկսված բարենորոգումները՝ մասնակի հաջողություններ կողքին արձանագրելով սկզբունքային լուրջ բացթողումներ: Նոր դպրոցի կառուցման տեսական հիմքերը ամբողջացնելու հավակնությամբ առաջին փաստաթղթին («Հայաստանի Հանրապետությունում հանրակրթության բարեփոխման ուղենիշներ»,1995) հաջորդել է երկրորդը՝ «Հանրակրթության պետական կրթակարգ» վերնագրով: Տարբերություններ, իհարկե, կան սրանցում: Առաջինը հավակնոտ ձևով «ուղենիշները» հանձնարարում էր գրեթե իբրև Աժ-ի օրենք, երկրորդին համեստորեն զարդարում է «նախագիծը»: Վերջինիս գրագետ եւ կիրթ հայերենով շարադրանքը (տեղ-տեղ միայն մութ, երբեմն էլ՝ վերամբարձ) ավելի է ընդգծում առաջինը կազմողների գրագիտության պակասը: Որքան էլ, սակայն, տարբերություններ լինեն, առանցքային մի հարցում առկա է ընդհանրությունը՝ երկու փաստաթղթերն էլ որոշակիորեն միսված են դպրոցում օրինականացնելու աղքատիմացությունը: Այլ կերպ լինել չէր կարող՝ երկուսի պատվիրատուն էլ նույն Համաշխարհային բանկն է: Եթե բանկը համաշխարհային է, նրա հետաքրքրած նպատակները չեն կարող տեղական կամ թեկուզ տարածաշրջանային լինել: Լավատեղյակ մարդիկ պնդում են, թե ամբողջ աշխարհում նկատելիորեն իջել է կրթությանը ներկայացվող պահանջների նիշը եւ դա բացատրում են գլոբալիզացիայի ազդեցությամբ: համաշխարհային կայունության հետամուտ ուժերը, որոնց գործիքներից է Համաշխարհային բանկը, վարում են մտետապես թերզարգացումը թերուսուցման զուգակցելու հսկայական խաղաթղթականություն: Ըստ որում՝ դրանից առաահովված չեն, որքան էլ զարմանալի լինի, այդ հզոր ուժերի հայրենիքները: Իրեց իսկ խոստովանությամբ՝ ամերիկյան հինգ շրջանավարից մեկը իր անուն ազգանունը գրել չգիտի կամ գրում է սխալներով (այս առումով «առաջընթաց» նկատելի է մեզանում եւս): Աշխարհի հզորներին, իսկապես, տեղական հայրենիք պետք չէ, ամբողջ աշխարհը պետք է լինի նրանց «հայրենիքը»

Շեղ հրաստարակությամբ եւ մեր օրերի համար ռեկորդային՝ երեք տարվա համար նախատեսված նյութը մատուցելու համար: Նման պայմաններում մեկ տարվա հավելումը ընդամենը տարեվաճառություն է լինելու: Իսկ եթե նկատի ունենանք, որ արդեն հինգ տարեկանից պետք է դպրոց հաճախի երեխան (նախադպրոցական համակարգն էլ պիտի ավերվի, չէ՞), երեք տարվա համար նախատեսվածը ուսուցանվելու է հինգ տարում:

հազար տպաքանակով լույս տեսած «Նախագիծը» մարզերում եւ մայրաքաղաքում քննարկվում է խորհրդային ժամանակներին բնորոշ «առանձին-առանձին դեմ են, բոլորը միասին՝ կողմ» ընթացքով: Անկեղծ լինենք՝ «Նախագծի» բովանդակությունը շեղությամբ գերազանցում է ձեւավորումը: Եթե հավատալու լինենք «Սովորողների պատրաստվածությանը ներկայացվող ընդհանրական պահանջներին», իսկ երեք կուսակցությունների «կոալիցիոն» մտքին չհավատալու հիմքեր չունենք, ապա մոտակա ապագայում տարրական դպրոցն ավարտողը ունենալու է այսօրվա միջնակարգ դպրոցի շրջանավարտի, իսկ ավագ դպրոցինը՝ բուհի շրջանավարտի մակարդակ, իսկ թե ինչպիսի կլինեն բուհերի շրջանավարտները, հավանաբար կիմանանք «Բարձրակրթության պետական կրթակարգի» սպասվելիք նախագծում: Փաստաթղթին դեռեւս անծանոթ մարդկանց պատկերացում տալու համար մեջբերենք հայոց լեզվից եւ գրականությունից տարրական դպրոցն ավարտողին ներկայացվող պահանջը. «Տեսնի, ճանաչի եւ զգա գեղեցիկը, որոշակի բարոյական չափանիշներով այն գնահատի եւ դրա հիման վրա ձեւավորի սեփական արժեքների համակարգը», էջ 38: (Սա երեք պահանջներից երկրորդն է): Միջին դպրոցի շրջանավարտին թողնելով «սեփական ես-ի խոր գիտակցության» փնտրտուքներում, հասնենք ավագ դպրոցն ավարտողին: «Գրական երկերի ուսումնասիրության արդյունքում ունենա գեղագիտական ճաշակ արվեստի գեղագիտական ճաշակ արվեստի գործերին, գրական ստեղծագործություններին ծանոթանալու պահանջ», էջ 38 (հայոց լեզվի եւ գրականության մի ուսուցչուհի գտնում էր, որ տարրական եւ ավագ դպրոցների տեղերը խառնել են): Շատ ավելի ամբիցիոզ են բոլոր առարկաների յուրացման արդյունքում ավագ դպրոցի շրջանավարտին ներկայացվող պահանջները. «Գիտական հետազոտության մեթոդների կիրառմամբ մարդու, բնության եւ հասարակության վերաբերյալ գիտելիքների համակարգի յուրացման եւ այդ ոլորտներում ձեռքբերումների ու առկա հիմնախնդիրների ուսումնասիրման կազմակերպում», էջ 15:

Երբ հասու ես լինում այս հրաշալի հեքիաթը իրականացնելու կրթա-գիտա-մեթոդա-մանկավարժական «հիմունքներին», համոզվում ես, որ առատության եղջյուրից թափվող չափորոշիչների ծխածածկույթով փորձել են ուշադրությունը շեղել առանցքային խնդիրներից: Ցանկացած բնույթի բարեփոխում իրականացնողը առաջին հերթին եւ գերազանցապես ուսուցիչն է: Նրա ուսերին է բարդվում կրթության որակը բարձրացնելու պատասխանատվությունը: Բայց չգիտես ինչու ուսուցչի պայմանները բարելավելու փոխարեն ձեռնարկվել են հակառակ ուղղությամբ միջոցառումներ: Ուսուցման որակը բարձրացնելու համար բարձրացնում են դասարանի խտությունը՝ 25-ից հասցնելով 36-ի (առայժմ, հետագայում հասցնելու են 40-ի), ավելացնում ուսուցչի դրույքաչափը՝ 18-ի փոխարեն 21-22 ժամ: Ըստ այս նոր տրամաբանության որքան մեծ է դասին մասնակցող աշակերտների թիվը եւ բարձր ուսուցչի շաբաթական ծանրաբեռնվածությունը, այնքան բարձր կլինի ուսուցման որակը: Այս դեպքում, ահա, ապահովաբար բոլոր պայմանները ստեղծվում են, որպեսզի սովորական ուսուցիչը դառնա «ստեղծագործող ուսուցիչ»: Նույն տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում բարեփոխումների ընթացքի որակյալ ղեկավարման համար որն նախարարը պետք է կրճատեր իր տեղակալներից մեկին, մինչդեռ հայտնի է, որ կարծես, տեղակալի լրացուցիչ հաստիք է ստեղծում:

Ուսման բուն որակը բարձրացնելու կոչվածների բեռը ծանրացնում են, իրենցը՝ թեթեւացնում:

Սրանք մտնո՞ւմ են միլիոններ տրամադրող Համաշխարհային բանկի պահանջների մեջ, թե նախարարության նորամուծություններն են, արդեն ոչ մի նշանակություն չունի. կրթական խաղաթղթականության ուղղությունը՝ դեպի աղքատիմացություն, հստակեցված է (հմիջիայլոց՝ համաշխարհայնացումը ղեկավարողների տակտիկական հնարանքներից մեկը իրենց նպատակները «ազգային» ուժերով իրականացնելն է):

Լուրջ տարակույսների տեղիք է տալիս տասներկուամյա ուսուցման պահանջը, մանավանդ, երբ ոչինչ չի արված տասնմեկամյա ուսուցում իրականացնելու ուղղությամբ: (Ավելացված երկու տարվա համար նախատեսվում է մեկ կիսամյակի նյութի հավելում): Կարծում եմ՝ ոչ պատահականորեն միջին դպրոցին (ուսուցման հիմնական ծանրությունը կրողն է) հատկացված հինգ տարին մնում է անփոփոխ, մեկական տարով երկարաձգվում են տարրական եւ ավագ դպրոցները: Հնուց մանկավարժների վկայությամբ՝ տարրականին երեք տարի հատկացնելը լիովին բավարար է ծրագրերով նախատեսված նյութը մատուցելու համար: Նման պայմաններում մեկ տարվա հավելումը ընդամենը տարեվաճառություն է լինելու: Իսկ եթե նկատի ունենանք, որ արդեն հինգ տարեկանից պետք է դպրոց հաճախի երեխան (նախադպրոցական համակարգն էլ պիտի ավերվի, չէ՞), երեք տարվա համար նախատեսվածը ուսուցանվելու է հինգ տարում:

Արդարացված չէ ավագ դպրոցի երկարաձգումը եւս:

Չարիքների փոքրագույնը կլիներ, եթե տարրականը չորս տարի դառնար հինգ տարեկանից հաճախումով, իսկ ավագ դպրոցում երրորդ տարին, ինչպես նախկինում էր նախատեսված, հատկացվեր բուհ ընդունվողներին լրացուցիչ նախապատրաստելուն («ռեպետիտորությունը» կփոխադրվեր դպրոց):

Օպտիմալացման տխուր հետեւանքները չհաղթահարված, հերթական միլիոններն են շրջանառվում ազգային կրթությանը հերթական հարվածները հասցնելու համար:

Ներդպրոցական եւ միջդպրոցական բազում խնդիրներ են ծագել: Խիստ անհանգստացնում է գիտելիքների գնահատման կենտրոնի հեռանկարը (գնահատականը դպրոցից հանելը ամենալուրջ հարվածը կլինի ուսուցման որակին), դժգոհություններ են տալիս օպտիմալացման ընթացքը... դասագրքերի որակը քննարկումների նյութ պետք է դարձնել:

Կուտակված խնդիրները նախընտրական քարոզարշավի ոգով «քննարկելը» ոչ մի դրական արդյունքի չի հանգեցնի:

ԳԱՌԵԻՆ ԱՆԴՐԱՆԻՏ,
Գոկտ., պրոֆ.,
ԵՊՀ ժուռնալիստիկայի
ֆակուլտետի դեկան

Թուրքա՞ն երաժշտություն սրճարաններում

Մայրաքաղաքն օրեցօր դիմազրկվում է, մշակութային ներքին մթնոլորտի մասին մնանք երազող, իսկ քաղաքն առավել խեղաթյուրվում է ճարտարապետական տեսանկյունից: Հաջողված մի քանի նորակառույցների կողքին այնքան շատ են անճաշակ, խայտաբղետ շինությունները, որոնք էլ հիմք են տալիս վերոնշյալ կարծիքին: Ով որտեղ հասցնում՝ իր ճաշակով մի կցորդ է հավելում շենքի ճակատից, տանիքից կամ կողքից: Մայթերի-վրա են հիմա էլ գրոհում, շենքերն «առաջ են տալիս» ոչ միայն բակի կողմից, այլեւ՝ փողոցի: Հերթական կրպակը կամ վարսավիրանոց-կոշկակարի «բուդկան» է հայտնվում մայթեզրին, երբեմն՝ շենքին սերտաճած կամ էլ՝ կանաչ գազոնների տեղում:

Համընդհանուր շինարարության մեջ առանձնահատուկ գերակշռող մաս կազմում են սրճարանները, դրանցից մի մասը խեղդել է քաղաքը, ինչպես օրինակ, Ազատության հրապարակի սրճարանատեղմօղակը: Մի մասը հարմար տեղեր է գտավել այգիներում՝ հաջողությամբ նպաստելով բնակչության հանգստի եւ հաճույքի պահանջներին: Հատկապես բացօթյա սրճարանային սեզոններին Երեւանը կարելի է համարել երաժշտական քաղաք, քանի որ սրճարանառաս մեր քաղաքում երաժշտությունը սրանց անբաժանելի մասն է կազմում: Հատկապես օտարերկրյա հյուրերից բազմիցս դժգոհություններ են լսել հասարակական նման վայրերում հնչող չափից ավելի բարձր երաժշտության մասին: Դե, ինչու միայն դրսի հյուրերի. մենք պակա՞ս ենք դժգոհում: Սրճարաններում հնարավոր չէ հանգստանալ, զրուցելու մասին չխոսենք: Տոնավաճառներում, գեղնուղիներում, երթուղային տաքսիներում անպակաս է երգ-երաժշտությունը: Ուրախ քաղաք է Երեւանը, ամեն տեղից գլուխդ բռնելով պիտի անցնես (ընտրության հնարավորությունն էլ մեծ է՝ բացառությամբ դասական երաժշտության):



Չմեռվա սեզոնին սրճարաններն այնքան էլ մարդաշատ չեն: Հաճելիորեն կահավորված ու հանգստավետ վայրեր Երեւանում դժվար չէ գտնել: Դրանցից մեկը («Շալե») Օղակաձեւ զբոսայգում, փայտե ճաշակավոր դեկորներով, ծխագույն ադամանդներով, բավականին նրբանկատ, բարեկիրթ սպասարկումով եւ համեմատաբար մատչելի գնացուցակով: Սակայն այս ամենն աչքիցդ ընկնում է, երբ ձեւավորմանը, ներքին միջավայրին անհաղորդ՝ շարունակաբար հնչում է արեւելյան ծորուն մեղեդին: Լսվում է Երեւանում վերջերս տարածում գտած պարսկա-արաբական երաժշտությունը, ապա եւ մեղմասահ անցում է կատարվում՝ լսելու թուրքական կես ժամանոց երաժշտական մի հաղորդում: Ու ընտանիքներում սրա պատճառով լուրջ տարաձայնություններ էին լինում: Սա հատկապես ավտոբուսի վարորդներին էր բնորոշ, որոնք անվրդով ուղեւորների մի մասին ենթարկում էին մշակութային տեռորի: 1988-ից, հետպատերազմի տարիներից հետո թուրքական երաժշտական այդ կոլորիտը դուրս մղվեց մեզանից: Ցավոք, վերջերս վերակենդանանում է, ասես, այս սովորույթը: Նման երաժշտություն լսվում է հատկապես սրճարաններում, իսկ հաճախ ուղեկցում խորհանք առաջացնող հեռուստատեսային մի շարք գովազդների (սենդամքերների, օրինակ, մեղրի մի տեսակի):

Արեւելաստեղները կհակադրվեն, իհարկե, տրամաբանելով, թե սա չլինի, մեկ ուրիշը կինչի (եվրոպական, ամերիկյան, ռուսական): Բայց մենք կարծես թե ամենավերին աստիճաններից սկսած ինտեգրվում ենք արեւմտյան արժեքային համակարգին (այդ արժեքային համակարգից դուրս չէ նաեւ մշակույթը): Եկեք չմոռանանք, որ մենք վաղուց ենք բռնել այդ ճանապարհը, երբ 301 թ. քրիստոնեությունը հռչակեցինք պետական կրոն: Եվ 1700 տարի քրիստոնեական քաղաքակրթություն եւ մշակույթ կրող ու ստեղծող ազգ ենք համարվում՝ արեւմտյան մշակութային արժեքային համակարգի ծիրում: Սա՝ իմիջիայլոց: Այսօր մեր մայրաքաղաքի կենտրոնում արեւելածոր «մուղամների» ջաղագովների մղումները շատերին անցանկալի են, վանիչ, ուստի երաժշտական նման տարածումներն անհրաժեշտ է պարզապես մերժել տարբեր ձեւերով (մենք, օրինակ, խնդրեցինք փոխել՝ զգացնել տալով, որ այլեւս իրենց չենք այցելի):

ՄԵԼՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ,

Բաղդադի եւ Քերբելայի ահաբեկչության համար Չիա առաջնորդները մեղադրում են ԱՄՆ-ին

Չիա արաբների դեմ ահաբեկչական հարձակումներն Իրաքում հեւզհեւեւ հաճախակի բնույթ են ստանում: Դրանցից վերջինը կատարվեց մարտի 2-ին, երբ Քերբելայում եւ Բաղդադում միաժամանակ պայթյունների զոհ դարձավ 282 մարդ: Վերջին հարձակումների առանձնահատկությունն այն էր, որ նույն օրը հարձակման էին ենթարկվել նաեւ Պակիստանի չիաները՝ տալով ավելի քան 40 զոհ: Նատտորեն իրականացրած այս սպանությունների պատասխանատվությունն ընկնում է Իրաքում ահաբեկչական խմբավորումներին անտեսող օկուպանտների վրա»: Իրաքի չիա իմամներից Մեհդի ալ Հալիսին իր հերթին նշել է, որ Բաղդադում եւ Քերբելայում կատարված հարձակումները ծեռնտու են ԱՄՆ-ին, առա եւ ավելացրել. «Հարձակումները, ինչպես փորձում է ներկայացնել ամերիկյան եւ արեւմտյան մամուլը, սուննի մահապարտները չեն իրականացրել, ընդհակառակը՝ այս նպատակով հեռահար կառավարման ռումբեր են պայթեցվել: Սա սուննիներին խորթ մեթոդ է»:

Իմամին է հետեւել Լիբանանի չիաների հոգեւոր առաջնորդ այաթոլլահ Մոհամմադ Հուսեյն Ֆադլալլահը՝ ավելացնելով. «ԱՄՆ-ը չիաներին եւ սուննիներին հակադրելու միջոցով երկրում իրագործում է միջդավանանքային հակամարտություն հրահրելու ծրագիր»: Նա Բաղդադի եւ Քերբելայի պայթյունները պայմանավորել է հենց այդ ծրագրով: Այդ ընթացքում Իրաքի սուննի հոգեւորականությունն, ի դեմս Մոհամմադ Բաքր Ֆեյդիի, կարծես հաստատելու համար չիա առաջնորդի խոսքերը, ուշադրություն է հրավիրել չիա-սուննի բախումների հրահրման նպատակով երկրում շրջանառության մեջ դրված սցենարի վրա: Նա չիաներին ու սուննիներին կոչ է արել համերաշխությամբ կանխարգելել դրա կիրառումը:

Կհաջողվի՞ Իրաքի հոգեւոր առաջնորդներին կանխել երկրում չիաներին սուննիների դեմ հանելու նկրտումները, դժվար է ասել: Բայց որ չիա-սուննի բախումները հեռանկարային են Իրաքի օկուպացիոն ուժերի համար, կասկած չի հարուցում: Ինչո՞ւ: Այն պարզ պատճառով, որ չիա եւ սուննի դավանանքի հետնորդներ, բացի արաբներից, կան նաեւ քրդերի եւ թուրքմենների մեջ: Այլ կերպ՝ Իրաքի արաբներին, քրդերին եւ թուրքմեններին միմյանց հակադրելու դեպքում միջդավանանքային բախումները միաժամանակ վերածվելու են միջէթնիկ բախումների:

Հարկ է. սակայն, նշել, որ միջդավանանքային բախումների պարագայում խնդիրը սոսկ Իրաքը չէ, այլեւ ողջ տարածաշրջանը: Պակիստանում չիաների դեմ կատարված ահաբեկչությունը թերեւս կարելի է համարել իրական սցենարը Մեծավոր եւ Միջին Արեւելքի այլ երկրներում փորձարկելու պատրաստականության դրսեւորում: Ինչ վերաբերում է դրա նպատակին, ապա պետք է ասել, որ Իրաքի վարչականորեն վերակառուցումը եթե միջազգային ուժերին տալիս է նրա վրա վերահսկողության հաստատման հնարավորություն, ապա Իրաքի օրինակով Մեծավոր եւ Միջին Արեւելքի վերակառուցումը նրանց այդ նույն հնարավորությունը կտա ողջ տարածաշրջանում:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՏՅԱՆ

Բաղդադի եւ Քերբելայի ահաբեկչությունները կազմակերպել է Զարքաուին»

Իրաքում ամերիկյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջոն Աբիզեյդը հայտարարել է, թե առնվազն 280 զոհ պատճառած Բաղդադի եւ Քերբելայի ահաբեկչությունների կազմակերպիչը Աբու Մուսաբ ալ Զարքաուին է: «Ահաբեկչությունների կազմակերպման մակարդակը, ինչպես նաեւ իրական խաղաղ չիա մահմեդականներին վնասելու դիտավորությունն ուղղակի վկայում են Զարքաուիի ահաբեկչական ցանցի մասնակցության մասին», ասել է նաեւ ԱՄՆ Կոնգրեսի հանձնախմբերից մեկի նիստում:

Ամերիկյան հատուկ ծառայությունների ներկայացուցիչներից շատերն Իրաքի տարածքում Զարքաուիին համարում են Ուսամա բեն Լադենից ավելի վտանգավոր: BBC-ն հիշեցնում է, որ փետրվարի սկզբներին ամերիկացիները 10 մլն դոլարի էին հասցրել Զարքաուիի գլխի դիմաց խոստացված պարգեւավճարը:

Հորդանանցի այդ ահաբեկիչը բեն Լադենի մերձավորագույն զինակիցն է եւ ղեկավարում է ահաբեկչական գործողություններն Իրաքի տարածքում: Փետրվարին ամերիկացիների ձեռքն էր ընկել Զարքաուիի նամակը, որով նա «Ալ Ղաիդայի» ղեկավարներին կոչ էր անում Իրաքում չիաների եւ սուննիների կրոնական պատերազմ սանձազերծել եւ պայքարել երկիրն իշխանափոխությունից առաջ:

«Վաշինգտոն փոստի» տվյալներով, ալ Զարքաուին արդեն ստեղծել է սեփական ահաբեկչական ցանց եւ գործում է «Ալ Ղաիդայից» եւ բեն Լադենից անկախ:

Փարիզը եւ Բեռլինը վերապահումով են ընդունում «Մեծ Միջին Արեւելքի» ամերիկյան ծրագիրը

Ամերիկացիների առաջարկած «Մեծ Միջին Արեւելքի» ծրագրի առթիվ Ֆրանսիան եւ Գերմանիան մշակել են ընդհանուր նախագիծ, որը ներկայացվել է եվրամիության մյուս երկրներին եւ քննարկվելու է մարտի 25-26-ը եվրախորհրդի նիստում: Փարիզի «Մոնդ» թերթը տեղեկացնում է, որ Միջին Արեւելքի զարգացմանն ուղղված Ֆրանս-գերմանական նախագիծը փորձում է լրացնել «Մեծ Միջին Արեւելքի» ամերիկյան ծրագիրը՝ միաժամանակ հանդես բերելով ուրիշ մոտեցում: Այս կապակցությամբ եվրամիության նախագահությունը պետք է «փուլային զեկույց» ներկայացնի եվրախորհրդի մարտյան համաժողովում:

Փետրվարի 7-ին Այունխենում Գերմանիայի արտգործնախարար Յոշկա Ֆիշերը Միջին Արեւելքի ապագայի առնչությամբ արտահայտել էր ամերիկյան ծրագրից զատ չտարբերվող տեսակետներ, մասնավորապես՝ անվտանգության հարցերի առթիվ: «Մոնդի» տվյալներով, հետագա օրերին մշակվել է Ֆրանս-գերմանական ընդհանուր դիրքորոշում, որը տարբերվում է ամերիկյան ծրագրից:

«Միջին Արեւելքի ընդհանուր ապագային միսված ռազմավարական գործընկերություն» կոչվող Ֆրանս-գերմանական նախագիծը, ըստ «Մոնդի», ոչ այնքան տարածաշրջանի թերզարգացած ժողովուրդների հավակնությունների արտահայտությունն է, որքան քաղաքական փաստաթուղթ, որը թվարկում է նպատակին հասնելու ռազմավարական միջոցները: Նախագծում շեշտվում է, որ «Միջին Արեւելքին վերաբերող ամեն մի նախաձեռնություն պետք է համապատասխանի տարածաշրջանի կարիքներին եւ իղձերին»: Սա ամերիկյան ծրագրին հակադրվելու յուրօրինակ ձեւ է: Ի դեպ, արաբական շատ երկրներ Վաշինգտոնի պարտադրանքով ստեղծված «մոդել» են համարում ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Մարկ Գրոսմանի առաջարկած «Մեծ Միջին Արեւելքի» ծրագիրը, որին անցյալում «Ազգը» քանիցս անդրադարձել է:

Ֆրանս-գերմանական նախագծում ընդգծվում է, որ եվրամիությունն ԱՄՆ-ից էլ շուտ է սկսել հետաքրքրվել Միջին Արեւելքի եւ Միջերկրածովի ապագայի խնդիրներով: Մասնավորապես 1995 թ. Բարսելոնի համաժողովում այդ տարածաշրջանը հայտարարվել էր եվրոպացիների «գլխավոր գերակայության» գոտի: Այնուհետեւ նշվում է, որ տարածաշրջանում «հարկավոր է երկխոսություն ծավալել ոչ միայն կառավարությունների, այլեւ քաղաքացիական հասարակության հետ՝ հնարավորինս հարգելով յուրաքանչյուր երկրի իրողությունները, ազգային զգացմունքները եւ ինքնությունը»:

Ի տարբերություն «դեղատոմսեր» առաջարկող ամերիկյան ծրագրի, ֆրանս-գերմանական փաստաթուղթը հիմնվում է 2003 թ. եվրամիության ընդունած անվտանգության ռազմավարության վրա, որը շեշտում է իսրայելա-պաղեստինյան հաշտության գործընթացի կարեւորությունը: Փարիզում եւ Բեռլինում արդյունավետ են համարում միայն եվրամիության, ՄԱԿ-ի եւ ՆԱՏՕ-ի մասնակցությամբ իրականացվող «բազմակողմ գործունեությունը»:

Պ. ՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱԿԻՐՃ

Բաքվի օդանավակայանում ընկել է «Իլ-76» ինքնաթիռը

Երեկ առավոտյան Բաքվի «Բինա» օդանավակայանում վայր է ընկել Անկարա-Քաբուլ չվերթի «Իլ-76» բեռնատար օդանավը: Աղետը տեղի է ունեցել նախկին Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլու ժամանումը: Ընկած օդանավի անձնակազմի 3 անդամներ զոհվել են, մյուս 4-ը վիրավոր են եւ այժմ հիվանդանոցում են: Այդ մասին հայտարարել է «Ազերբայջան հավա յոլլարի» պետական կոնցեռնի տնօրեն Ջահանգիր Ասկերովը:

Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ «Իլ-76»-ը Բաքվում վայրէջք էր կատարել վերալիցքավորման համար: Բարձրանալիս ինքնաթիռն ընկել եւ այրվել է: Աղետյալ ինքնաթիռը պատկանում էր ուկրաինական «Ազովավիա» ընկերությանը:

Անկման պատճառը, նախնական տվյալներով, այն է, որ անձնակազմը չի կարողացել կառավարել օդանավը: Թռիչքուղուց 2 կմ հեռավորության վրա ինքնաթիռը մխրճվել է հողի մեջ: Տեղափոխված բեռների մասին որեւէ հաղորդում չի տարածվել:

Նախնական տեղեկությունների համաձայն, ընկած ինքնաթիռի տեխնիկական վիճակը եղել է բավարար: Ասկերովի խոսքերով, ստեղծվել է միջադեպը ինքնախնամք, որն արդեն ծեռնամուխ է եղել աշխատանքին: Մանրամասնությունները հայտնի կդառնան 2-3 օր հետո: Ինքնաթիռի «սեւ արկղի» հետազոտումը թույլ կտա մեկ ամսվա ընթացքում պարզել միջադեպի բոլոր մանրամասնությունները:

4 մարդ է սպանվել Քութայիսում

Վրաստանի նոր իշխանությունների՝ հանցագործ տարրերին ոչնչացնելու արշավը միշտ չէ, որ հաջողությամբ է ավարտվում: Երեկ, ինչպես հաղորդում է «Նովոստին», հակաքրեական տարրերի դեմ պայքարի շրջանակներում Վրաստանի մեծությամբ երկրորդ քաղաք Քութայիսում տեղի է ունեցել ողբերգություն: Օրը ցերեկով քաղաքի կենտրոնում իրավապահները փորձել են զինաթափել եւ ձերբակալել երեկ կասկածյալ հանցագործների: Փոխհրաձգության հետեւանքով սպանվել է անցորդներից մեկը, ինչպես նաեւ ոստիկանության երկու աշխատակիցներն ու հանցագործներից մեկը: Մյուս երկու հանցագործներին հաջողվել է ձողողել:

Պակիստանը պատրաստ է միջուկային զենք տալ Նիգերիային

Պակիստանի իշխանությունները պատրաստ են ռազմական օգնություն ցույց տալ Նիգերիային եւ այդ երկիրը դարձնել միջուկային տերություն: Նիգերիայի պաշտպանության նախարարությունում բրիտանական «Գարդիան» թերթի թղթակցին հայտնել են, թե հիշյալ առաջարկությունն արել է Պակիստանի բանակի շտաբների միացյալ կոմիտեի ղեկավար, գեներալ Մուհամմադ Ազիզ Խանը Նիգերիայի պաշտպանության նախարարի հետ կայացած հանդիպման ժամանակ:

Խանը հայտարարել է, թե պակիստանցի զինվորականները եւ համագործակցության մեծ ծրագիր, որը նախատեսում է միջուկային օգնություն Նիգերիային: Սակայն չի հաղորդվում, թե կոնկրետ ինչպիսի սպառազինություններ, նյութեր կամ տեխնոլոգիաներ պետք է փոխանցվեն այդ ծրագրի շրջանակներում:

Հունվարի վերջերին Նիգերիայի կառավարության ներկայացուցիչը հայտարարել էր, թե ԿԺԴՀ-ի հետ պարտադրվում է նախնական պայմանագիր, ըստ որի Նիգերիան ստանալու է կորեական հրթիռային տեխնոլոգիաներ: Ավելի ուշ Փենյանում հերքել էին այդ լուրը, իսկ Նիգերիայի նախագահի մամլո քարտուղարն ասել էր, թե որեւէ համաձայնագիր չի ստորագրվել, իսկ հրթիռները նախատեսվում է օգտագործել բացառապես «խաղաղ» նպատակներով եւ սեփական տարածքի պաշտպանության համար:

«Բաղդադի եւ Քերբելայի ահաբեկչությունները կազմակերպել է Զարքաուին»

Իրաքում ամերիկյան զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ Ջոն Աբիզեյդը հայտարարել է, թե առնվազն 280 զոհ պատճառած Բաղդադի եւ Քերբելայի ահաբեկչությունների կազմակերպիչը Աբու Մուսաբ ալ Զարքաուին է: «Ահաբեկչությունների կազմակերպման մակարդակը, ինչպես նաեւ իրական խաղաղ չիա մահմեդականներին վնասելու դիտավորությունն ուղղակի վկայում են Զարքաուիի ահաբեկչական ցանցի մասնակցության մասին», ասել է նաեւ ԱՄՆ Կոնգրեսի հանձնախմբերից մեկի նիստում:

Ամերիկյան հատուկ ծառայությունների ներկայացուցիչներից շատերն Իրաքի տարածքում Զարքաուիին համարում են Ուսամա բեն Լադենից ավելի վտանգավոր: BBC-ն հիշեցնում է, որ փետրվարի սկզբներին ամերիկացիները 10 մլն դոլարի էին հասցրել Զարքաուիի գլխի դիմաց խոստացված պարգեւավճարը:

Հորդանանցի այդ ահաբեկիչը բեն Լադենի մերձավորագույն զինակիցն է եւ ղեկավարում է ահաբեկչական գործողություններն Իրաքի տարածքում: Փետրվարին ամերիկացիների ձեռքն էր ընկել Զարքաուիի նամակը, որով նա «Ալ Ղաիդայի» ղեկավարներին կոչ էր անում Իրաքում չիաների եւ սուննիների կրոնական պատերազմ սանձազերծել եւ պայքարել երկիրն իշխանափոխությունից առաջ:

«Վաշինգտոն փոստի» տվյալներով, ալ Զարքաուին արդեն ստեղծել է սեփական ահաբեկչական ցանց եւ գործում է «Ալ Ղաիդայից» եւ բեն Լադենից անկախ:

Հայիթցի ապստամբները զինաթափվում են

Հայիթցի ապստամբների առաջնորդ Գի Ֆիլիպը երեկ հայտարարել է, որ միջազգային խաղաղարար ուժերի Հայիթի մուտք գործելուց հետո ինքը որոշել է զինաթափել իրեն ենթակա զինված կազմավորումները: «Քանի որ մեզ տրվել են հայիթցիների պաշտպանության երաշխիքներ, մենք պատրաստ ենք վայր դնել զենքը», ասել է նա CNN հեռուստաընկերության թղթակցին:

Ավելի վաղ Գի Ֆիլիպն իրեն հռչակել էր ոստիկանության պետ, բայց ԱՄՆ պետդեպարտամենտի ներկայացուցիչները հայտարարել էին, թե չեն ընդունում այդ նշանակումը: «Մենք ուրախ ենք, որ Հայիթիում բռնությունները դադարում են, բայց ապստամբները չպետք է որեւէ դեր խաղան այդ գործընթացում: Նրանք պետք է պարզապես վայր դնեն զենքը եւ գրվեն տները», ասել էր պետդեպարտամենտի ներկայացուցիչ Ռիչարդ Բաուչերը:

Ամերիկացիները մտահոգված են, որ ապստամբական կազմավորումները իշխանափոխության երեքշաբթա պայմարից հետո կարող են շարունակել բռնության գործողությունները: Չնայած ապստամբներն սկսել են զինաթափվել, Բաուչերի խոսքերին ի պատասխան Ֆիլիպը հայտարարել է, թե ինքը մտադիր չէ ենթարկվել օտար երկրների ղեկավարների հրամաններին: «Մենք թույլ չենք տա մեզ ծնշել: Եթե նրանք ուզենան ինձ սպանել, թող գան ու սպանեն: Ես պատրաստ եմ մեռնել իմ երկրի համար», ընդգծել է Գի Ֆիլիպը:

Պ. Ք.

Մշակույթ

Կյանքը վերելքի մեջ

Սուրեն Զուրաբյանի հիշատակին

Մարտի 9-ին երգիչ եւ բժիշկ Սուրեն Զուրաբյանը (1964-2003 թթ.) կդառնար 40 տարեկան: Ստեղծագործող անհատի համար այդ տարիքը սովորաբար նշանավորում է հասունության սկիզբը, վերելքի ազդակը: Բայց Սուրեն Զուրաբյանի կարճատեւ կյանքն անցավ ուրիշ տեմպով. արվեստում նրա վերելքն սկսվեց դեռ Երեւանի կոնսերվատորիայում ուսանելու ժամանակաշրջանում, իսկ հասունությունը դարձավ համերգային եւ օպերային բազմաթիվ ելույթների մշտական ուղեկիցը:

Դա տեղի ունեցավ թերեւս այն պատճառով, որ երգեցողությունը որպես գործունեություն Սուրենի համար կոչում էր. այն դարձավ նրա արտիստական խառնվածքի բնական արտացոլումը: Իհարկե, նա սովորել է վոկալի տեխնիկա: 1987 թ. Երեւանի բժշկական ինստիտուտի ատամնաբուժական բաժինն ավարտելուց հետո երկրորդ կրթությունն ստացավ կոնսերվատորիայում, մասնագիտանալով Մարիաննա Հարությունյանի եւ Վալերի Հարությունովի ղեկավարությամբ: Դրա հետ մեկտեղ, բուն վոկալի արվեստը Սուրենի մեջ բնածին էր: Այլապես նա չէր կարողանա բժշկական որակյալությամբ ծանրաբեռնված իր կյանքի ընթացքում երգել ծավալուն ձեւերի բազմաբնույթ ստեղծագործություններ, ազատորեն հաղթահարելով լատիներեն, գերմաներեն, իտալերեն, ֆրանսերեն, անգլերեն տեքստերի լեզվական պատնեշները:

Խառնվածքից բացի, Սուրեն Զուրաբյանի արտիստական վաղ հասունության պատճառը կանխորոշված էր նրա ծագումնաբանական արմատներով: Մոր՝ «Հայֆիլմ» ստուդիայի խմբագրական կոլեգիայում երկար տարիներ աշխատած սցենարիստ եւ դրամատուրգ Ագնեսա Սեւունցի կողմից ձգվում են երկու հզոր գրական լարեր: Մեկը պարզն է՝ գրող Գարեգին Սեւունցը, «Թեհրան» հանրահայտ վեպի հեղինակը, մյուսը տատն է՝ բանաստեղծուհի Շողիկ Մաֆյանը, որի ընարական ձիրքն առաջացնում էր ժամանակակիցների, մասնավորապես Ավետիք Իսահակյանի հիացմունքը: Իսկ Սուրենի հայրը՝ Արամ Զուրաբյանը, անցյալում Երեւանի կենսատեխնոլոգիայի ինստիտուտի տնօրենն էր, ականավոր գենետիկ Ն. Տիմոֆեեւ-Ռեսովսկու սիրելի աշակերտը, որին «Զուբր» էին անվանում: Սուրենի հայրական գծով արժե հիշատակել նաեւ պապին՝ դարձյալ Սուրեն Զուրաբյան անունով տեսաբան-ֆիզիկոսին եւ մանկավարժին:

Բայց նման տոհմական համաստեղության մեջ անգամ աղագա երգչի տաղանդը չէր զարգանա առանց նրան բնորոշ անհատականության: Սուրենի զարմանալի ներքին կարգապահությունը, զգացմունքների եւ գեղագիտական ապրումների խորությանն ադեկվատ հասու լինելու, այնտեղ անթերի, դարերով հոկված ձեւեր գտնելու նրա ունակությունը դաստիարակել էր հայկական երգը. ժողովրդական, աշուղական եւ մանավանդ հոգեւոր: Հենց հոգեւոր երգերը՝ իրենց ծաղկանախշերով անսահմանորեն բազմազան այդ միաձայն միջնադարյան մեղեդիները Զուրաբյանի համար դարձան վոկալ կատարելագործման գլխավոր դպրոց: Քնարական-հայեցողական, պատմողական եւ փիլիսոփայական, հերոսական եւ վշտալի, բայց միշտ որպես հուզականի ու մտավորի խտացում ընկալվող մեր հայկական շարականներն ու տաղերն էապես ազդեցին Զուրաբյանի վաղ կազմավորման վրա եւ, ըստ էության, կանխորոշեցին նրա ստեղծագործական ուղին: Եվ հետագայում հարթ, իր շարժման մեջ նպատակասլաց մեղեդային երգեցողությունը դարձավ Սուրեն Զուրաբյանի արվեստի հիմնական արժանիքներից մեկը:

Հիմա պատահական չի թվում, որ երգչի համերգային գործունեությունն սկսվեց 80-ական թթ. կեսերից, երբ Սուրենն սկսեց մասնակցել «Նարեկ» արական երգչախմբի կազմում (ղեկավար՝ Մկրտիչ Մկրտչյան) Մ. Եկմալյանի եւ Կոմիտասի պատարագների կատարմանը: Սուրենի ձայնի արտասովոր գեղեցկությունն ու ոգեղենությունը, որին Մկրտչյանը հանձնարարում էր ինչպես Պատարագի մեներգերը, այնպես էլ Գ. Նարեկացու, Ն. Շնորհալու եւ մյուս վարպետների տաղերի առանձին կատարումը, հետագայում երգչի համար կայուն տեղ ապահովեցին Երեւանի տարբեր համերգասրահներում հնչած զանազան կոմպոզիտորների հոգեւոր ստեղծագործությունների կատարողական ցանկում:

Ս. Զուրաբյանի ընարական տենորի տեմբրն աչքի էր ընկնում առանձնահատուկ արտահայտչականությամբ. մի կողմից՝ ամեն տեսակ մելոդիկ նախշերի «հյուսման» ընդունակ նուրբ, արծաթահունչ ձայնի անսովորությամբ, մյուս կողմից՝ երաժշտության ողբերգական վերապրման խորությամբ: Խոսքը դրամատիկ հուզմունքի, գերհուզականության կամ հակադիր զույների մասին չէ: Ընդհակառակը, իր երգեցողությամբ, ինչպես կյանքում, Սուրենը մարմնավորում էր հանդարտություն, արտաքին անխռովություն, որոնց հետեւում թաքնված էր ոգու ողբերգական անհանգստությունը: Սուրեն Զուրաբյանի կատարմամբ այն հայկական միջնադարյան համաչափ մեղեդիները հագեցնում էր ներքին դինամիկայով, անբացատրելի թախծով ու տրտմությամբ: Չլինելով կրոնավոր, իր երգեցողությամբ Սուրենն արտահայտում էր խոնարհամտություն եւ աստվածահաճո հնազանդություն: Եվ հատկանշական է, որ Զուրաբյանը Հայաստանում կատարվող բազմաթիվ կրոնական-հոգեւոր ստեղծագործությունների մշտական մեներգիչն էր: Դրանք են Յ. Ս. Բախի «Շարչարանքներ ըստ Մատթեոսի» եւ «Շարչարանքներ ըստ Հովհաննու» գործերը (դիրիժոր՝ Զ. Վարդանյան), Վ. Ա. Մոցարտի (դիր.՝ Լ. Ճգնավորյան), Զ. Վերդիի Ռեքվիեմները (դիր.՝ Օ. Դուրյան), Լ. Բեթհովենի «Հանդիսավոր մեսսա» (դիր.՝ Լ. Բաղդասարյան), Յ. Հայդնի «Աշխարհի արարումը» (դիր.՝ Զ. Վարդանյան), Վ. Ա. Մոցարտի «Թագադրման մեսսա» (դիր.՝ Հ. Միրզոյան), Զ. Ռոսինիի «Հանդիսավոր մեսսա» (դիր.՝ Է. Թոփչյան), Շ. Գունոյի «Մեսսա» (դիր.՝ Օ. Դուրյան), Ա. Բրուկների «Te Deum» (դիր.՝ Օ. Դուրյան) ստեղծագործությունները: Զուրաբյանի մեներգչային տենորը երաժշտության մեջ ներմուծում էր անհրաժեշտ հանդարտություն եւ Տիրոջ փառաբանում:

Սուրեն Զուրաբյանը շատ է կատարել տարբեր ժանրերի աշխարհիկ երաժշտություն: Օրինակ՝ անմոռանալի էր Բ. Բրիտենի տենորի, գալարափողի եւ լարային նվագախմբի համար գրած «Սերենադի» կատարումը 1996 թ. կոմպոզիտորին նվիրված հայկական փառատոնում (դիր.՝ Կ. Դուրգարյան) կամ Կ. Օրֆի «Կարմինա Բուրանայի» կատարումը (դիր.՝ Օ. Դուրյան եւ Լ. Ճգնավորյան): Օպերային բեմի վրա նա իրեն դրսեւորեց որպես արտիստ (2003 թ. գարնանը Մոսկվայի օպերային ստուդիայում կայացած հյուրախաղերում ներկայացված Յ. Հայդնի «Դեղագործը», Պ. Լեոնկավալլոյի «Պայացները»), Ալմավիվայի դերերգը կատարեց «Սեւիլացի սափրիչի» (դիր. Է. Թոփչյան), Պամինոյի դերերգը՝ «Կախարդական սրինգի» համերգային կատարման մեջ (դիր. Զ. Վարդանյան):

Երաժշտության էությանը հուզականորեն խորամուխ լինելու ունակությունը մշտապես Սուրենին առանձնացնում էր կամերային համերգների մասնակիցների կազմից: Այսպես, կոմպոզիտոր Սիրվարդ Գարամանուկի հեղինակային համերգի ժամանակ (2003 թ. մայիս, Ա. Խաչատրյանի տուն-թանգարան) Սուրենն ունկնդիրներին ցնցեց աշուղական տիպի ընարերգության ընկալման ու վերարտադրման խորությամբ, Գարամանուկի երգերը կատարելով այնպես, ասես իրենը լինեին: Դժվար է մոռանալ երգչի դեմքը, նրա արտահայտիչ, լարված աչքերը:

Անձնական ներկայության, վերստեղծվող երաժշտությանն անձնական մասնակցության կնիքն առկա էր Զուրաբյանի ամբողջ կենսագործունեությունում: Հայացքով ընդգրկելով նրա ուղին, նկատում ես հատկանշական մանրամասնություններ, հրանցիկ արտահայտված մտքեր եւ, իհարկե, սիրելի ստեղծագործություններ: Ըստ երեւույթին պատահական չէ, որ Սուրեն Զուրաբյանի վերջին ելույթը կայացավ հունիսի 13-ին (ողբերգական մահից մեկուկես ամիս առաջ) Ֆիլհարմոնիայի Փոքր դահլիճում, Սանկտ Պետերբուրգի 300-ամյակին նվիրված երեկոյի ժամանակ: Սուրենը երգում էր իր սիրելի Լենսկու դերերգը (հրաժեշտի դերերգը) Պ. Չայկովսկու օպերայից եւ Ս. Սլոնիմսկու «Նադիրայի գազելները», որտեղ խոսվում էր կյանքի անցավորության եւ հոգու անմահության մասին:

ՍՎԵՏԼԱՆԱ ՄԱՐԳՍՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ԳԱՐԵՆԱՆՄՈՒՏ՝ ԿԱՆԱՆՑ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳՈՎ

Հայկական մթնոլորտ Ռուսաստանի դեսպանատանը

Սկիզբը էջ 1

Պրն դեսպանն ամենաջերմ ու ամենալավ մաղթանքներն ուղղեց կանանց, որ նրանք իրենց հոգում արեւ ունենան ու դեմքին ժպիտ, որ սիրվեն ու սիրված լինեն, բարի զգացմունքներ ու հույզեր կրեն, շրջապատված լինեն լավ մարդկանցով: «Գարունն այս տարի ավելի քան բարեհաճ է իր վաղ գալստով եւ սա հաստատես կնոջ համար է, որովհետեւ կինը եւ գարունը (մարդ, բնություն) նույնն են ըստ էության: Կինը կյանքի շարունակելիության խորհուրդն է կրում»: Ահա այս առիթով էր դեսպանատան համերգասրահը սովորականից ավելի տարբեր համերգ հյուրընկալել: Անսովոր այն առումով, որ դասական կամ ռուսական երաժշտություն էր սովորաբար հնչել դահլիճում, իսկ ահա երեկ՝ միայն հայկական ժողովրդական երգն ու երաժշտությունն էր թագավորում ռուսական դեսպանատան կամարների ներքո: Դեսպանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին եւ կազմակերպիչներին՝ ի դեմս Թեթեյան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանի:

Համերգային ելույթը սկսեցին Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի մշակույթի ֆակուլտետի ժողովրդական գործիքների նվագախումբը՝ դոցենտ Մեյրան Օհանյանի ղեկավարությամբ: Հնչած երգերը (Գուսան Շերամ՝ Հայրենյաց քաջեր) հայրենասիրական, զգացմունքային վարպետ կատարմամբ, ոգեւորեցին հանդիսականին: Ելույթ ունեցան միջազգային մրցույթների դափնեկիր Անն Մայիլյանը (Կոմիտաս՝ «Կանչե կռունկ», «Անտունի»), Անժելա Աբաբեկյան (Էշխեմեդ, ռուսական ժողովրդական երգերի, պոպուրի), Աննա Սարգսյան (հայկական ժողովրդական պարեղանակներ): Համերգը եզրափակեց միջազգային մրցույթների դափնեկիր «Բերդ» պարային համույթը՝ ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Բորիս Գեւորգյանի ղեկավարությամբ: Հայկական ժողովրդական երգի ու պարի, ազգային մեր երաժշտական մշակույթի այս ներկայությունը Ռուսաստանի դեսպանատանն իրոք անակնկալ էր շատերի համար, որովհետեւ սա ընդունեցին իբրեւ հաճելի նորույթ: Այս զուտ հայկականությունը մի փոքր անսովոր էր (գուցե տարօրինակ թվա) նաեւ ինձ համար: Այս ընթացքում, խառնակ օրերի ու մշակույթների բարդ հոլովույթներում, կարծես մոռացության էր տրվել մերը: Վաղուց նման ամբողջական երեկո՝ նվիրված հայ երգարվեստին չէր կազմակերպվել, մեզանից ասես օտարվել էր մերը, ու այս դահլիճում կարոտի նման զգացում արթնացավ, ասես օտար երկրում վաղուց չլսված-չհաղորդակցված որ հարազատին ես գտնում:

Հրաշալիորեն կազմակերպված համերգ-երեկոն՝ շնորհալի, տաղանդավոր կատարումներով, եւ գեղեցիկ արվեստով վերադարձ ու նաեւ կարոտ էր, որ հաճելի պահեր պարգեւելով ներկաներին՝ մեկ անգամ եւս սեփական մշակույթը սիրելու ու գնահատելու առիթն ընծեռեց նաեւ մեզ:

Մ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կրթալրատվական պարբերաթերթ Թբիլիսիում

ՀՐՈՒՑԱԿԻՑ

ՏՈՆ Է ԳԱՐՆԱՆ, ՏՈՆ Է ԿԱՆԱՆՑ

Թբիլիսիի հայկական թիվ 131 միջնակարգ դպրոցը այս տարվանից հրապարակում է կրթալրատվական պարբերաթերթ: Հրապարակվող պարբերականում հիմնականում դպրոցի առօրյային ու դպրոցի մասնաբով հետաքրքրական իրադարձություններին նվիրված թեմաներ ու հոդվածներ են:

Այն, որ Թբիլիսիում հենց դպրոցի մակարդակով հրապարակվում է պարբերաթերթ, արդեն ողջունելի քայլ է: Սա հատկապես կարեւոր է, եթե հաշվի առնենք, որ հայերենի ուսուցումը բավականին ցածր մակարդակի վրա է գտնվում Վրաստանում:

Թիվ 131 միջնակարգ դպրոցի կրթալրատվական պարբերաթերթի էջերում իրենց հոդվածներն են տպագրում դպրոցի աշակերտները: Պարբերաթերթի հայերենի առումով ուրախալի է, որ աշակերտների հայերեն լեզվի իմացությունը բավարարում է հոդվածներ հեղինակելու եւ դպրոցի կյանքին վերաբերող հետաքրքրական իրադարձությունները հայերենով շարադրելու համար:

Պարբերաթերթի 2-րդ համարում տեղ գտած նյութերը վերաբերում են «Դեղիս Տղե» Մոր օրվա տոնին, որ Վրաստանում նշում են մարտի 3-ին: Բնականաբար, հրապարակված պարբերականի հոդվածներն էլ նվիրված են դպրոցի ուսուցչուհիներին՝ աշակերտական շնորհավորանքներով:

Ա. Հ.

ԹԱՂՐԱՆԿԱՐՈՒ ԱՇՔԵՐՈՎ

Իսպանական ակումբները շարունակեցին հաղթարշավը

Պայայացան ՈՒԵՖԱ-ի գավաթի 1/16 եզրափակիչի պատասխան հանդիպումները, որից հետո պատվավոր մրցանակի հավակնորդների թիվը կիսով չափ կրճատվեց: Հերթական փուլի արգելքն առանց կորուստ հաղթահարեցին իսպանական թիմերը, որոնք գերազանց հանդես եկան: Իսպանական բոլոր չորս թիմերն էլ միայն «Գենչլերբիրլիգին» մատավ հաջորդ փուլ՝ սեփական հարկի տակ էլ հաղթելով «Պարմային» (3-0):

Ֆրանսիական ակումբներն էլ հաջող հանդես եկան: Չորս թիմերից երեքը շարունակում են պայքարը: Անհաջողության մատնվեց միայն «Սոշոն», որը սեփական հարկի տակ առաջին խաղում «Ինտերի» հետ ոչ-ոքի էր խաղացել (2-2): Միլանում դատի տերերը 2 անգամ մոտ էին հաջողությանը, սակայն Վիերին ու Ջանետին չօգտագործեցին գոլային պահերը: Իսկ ընդմիջումից հետո արդեն վտանգավոր էին «Սոշոյի» գրոհները, որոնց մեծ դժվարությամբ էին դիմագրավում իտալացիները: Խաղավարից 4 րոպե առաջ մրցակցին արմունկով հարվածելու համար դատից հեռացվեց Քրիսթիան Վիերին, առանց որի «Ինտերին» շատ դժվար կլինի 1/8 եզրափակիչում: «Ինտերը» դարպասը պահեց գրեթե առանց մեծ ծիգերի մտան հաջորդ փուլ: Թերեւս առավել դժվարին էր «Վալենսիայի» խնդիրը, որն առաջին խաղում սեփական հարկի տակ մեծ դժվարությամբ առավելության էր հասել թուրքական «Բեշիքթաշի» նկատմամբ (3-2): Պատասխան հանդիպումն իսպանացիների համար ավելի հեշտ դասավորվեց: Արդեն 12-րդ րոպեին Անգուլոն բացեց հաշիվը, իսկ 2-րդ խաղակեսում Սանչեսն ամրագրեց «Վալենսիայի» հաղթանակը (2-0): Իսպանա-թուրքական երկրորդ հակամարտությունն էլ ավարտվեց առաջինների հաղթանակով: «Վիլլառեալը» սեփական հարկի տակ ջախջախեց «Գալաթասարային» (3-0), որի հետ առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի (2-2): «Բարսելոնը» սեփական հարկի տակ էլ հաղթեց «Բրոնդբյուին»՝ 2-1 (առաջինը՝ 1-0), իսկ «Մալյորկան» թեեւ իր դատում 0-1 հաշվով զիջեց Մոսկվայի «Սպարտակին», սակայն ի հաշիվ մրցակցի դատում տարած համոզիչ հաղթանակի (3-0), մտավ հաջորդ փուլ:

Թուրքերը եւս մեկ կորուստ ունեցան: «Գալաթասարայը», որ սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթել էր «Ռոմային», հյուրընկալվելիս զիջեց (0-2) եւ դուրս մնաց պայքարից: Իտալացիներն արդեն առաջին խաղակեսում էմերսոնի եւ Կասանոյի խփած գոլերի շնորհիվ վճռեցին մրցակցության ելքը: Թուրքական չորս ակումբներից միայն «Գենչլերբիրլիգին» մտավ հաջորդ փուլ՝ սեփական հարկի տակ էլ հաղթելով «Պարմային» (3-0):

Իսպանական մյուս թիմերից երեքը շարունակում են պայքարը: Անհաջողության մատնվեց միայն «Սոշոն», որը սեփական հարկի տակ առաջին խաղում «Ինտերի» հետ ոչ-ոքի էր խաղացել (2-2): Միլանում դատի տերերը 2 անգամ մոտ էին հաջողությանը, սակայն Վիերին ու Ջանետին չօգտագործեցին գոլային պահերը: Իսկ ընդմիջումից հետո արդեն վտանգավոր էին «Սոշոյի» գրոհները, որոնց մեծ դժվարությամբ էին դիմագրավում իտալացիները: Խաղավարից 4 րոպե առաջ մրցակցին արմունկով հարվածելու համար դատից հեռացվեց Քրիսթիան Վիերին, առանց որի «Ինտերին» շատ դժվար կլինի 1/8 եզրափակիչում: «Ինտերը» դարպասը պահեց միայն «Գենչլերբիրլիգին» մտավ հաջորդ փուլ՝ սեփական հարկի տակ էլ հաղթելով «Պարմային» (3-0):

Ֆրանսիական ակումբներն էլ հաջող հանդես եկան: Չոր

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՇԱՐԱՀԱՍ

Պարարտանյութերն էլ թանկացա՞ն

Այս տարեսկզբից Թբիլիսիի Ռուսթավի քաղաքի գործարանից Հայաստան է ներկրվել շուրջ 2000 տոննա ազոտական պարարտանյութ: 700 տոննան ուղարկվել է Գեղարքունիքի մարզ, եւ ըստ գյուղնախարարի տեղեկատվության, գյուղացիներին վաճառվել է պարկը 3800 դրամով: Շիրակի մարզ առաքվել է 180, Լոռի՝ 240 տոննա:

Փետրվարի 1-ից Ռուսթավի գործարանից պարարտանյութի մեծածախ գինը 103-ից բարձրացել է 117 դոլարի: Սպասվում է, որ մարտի 6-ից 14-ը մեր հանրապետություն կներկրվի եւս 5000 տոննա: Այսինքն, մեծենայորեն Հայաստանում էլ կբարձրանան գները: Իբրեւ փոխհատուցում գյուղնախարարությունը իր նախաձեռնությամբ մինչեւ ապրիլի սկիզբը ներկրելու է եւս 2000 տոննա «ամոֆոս» տիպի պարարտանյութ, որը գյուղացիական տնտեսություններին անվճար կբաժանվի: Առայժմ կառավարությունում դեռ չեն քննարկվել պարարտանյութի գնի կարգավորման խնդիրները: Եթե այս ամենին գումարենք նաեւ վերավաճառողների մասնակցությունը գների վերաբաշխմանը, ապա պարարտանյութը հաստատապես կմտնի գյուղացու համար անմատչելի արտադրանքի ցանկում: Միայն թե վերավաճառողների ներխուժումն այս ասպարեզ պիտի որ բացառվեր, եթե նկատի առնենք, որ, ըստ կարգի, ներկրողները գյուղնախարարության միջնորդությամբ աշխատում են անմիջականորեն մարզպետների հետ:

Հիմնական ներկրողներից մեկը՝ «Դվին» կոնցեռնը, շուրջ 3000 տոննա պահեստավորած պարարտանյութ ունի Մասիսի պահեստներում, բայց թե թանկացումից հետո ինչ արժեքով այն կհասնի սպառողին, դժվար է լավատեսական կանխատեսումներ անել:

Ս. Դ.

ԱՆՊԱՐՏԱՃԱՆԱՉ

Հայաստանում 100-ից ավելի բնակավայրեր զրկված են սովորական հեռախոսակապից

Խորհրդային տարիներին Հայաստանի տարածքի 99 տոկոսում բնակչությունն ապահովված էր 21-րդ դարի համար խիստ սովորական կապի այս միջոցով: «Արմենտելի» հայտնությամբ մեր հանրապետության 100-ից ավելի բնակավայրեր տառացիորեն զրկվեցին սովորական լարային հեռախոսակապից: Որեւէ տեղ զանգահարել գյուղացիները կարող են մարզկենտրոն հասնելով, որը հաճախ կիլոմետրերով հեռու է տվյալ բնակավայրից: Դե պատկերացրեք այդ գյուղերի հիվանդների, կամ անսպասելի հիվանդացածների վիճակը, կամ հղիների, որոնք ժամկետից շուտ են ծննդաբերել:

Ըստ ՀՀ կապի եւ տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկյանի, «Արմենտելը» խոստացել է Հայաստանի ողջ տարածքն ապահովել լարային հեռախոսակապով: Այդ մասին մասնանշվում է նաեւ նրա 2004-2008 թթ. զարգացման ծրագրերում: «Մենք ամենօրյա կապի մեջ ենք «Արմենտելի» հետ, մենք ամեն օր պահանջում ենք ոչ միայն մարզերում, այլեւ Երեւանում, աղետի գոտում լուծել այդ խնդիրը: Սակայն ցավոք սրտի, մեր երկրում գործող օրենսդրությունը անբարեխիղճ է, կամ հնարավորություն չունի, կամ չի ցանկանում կատարել այդ պահանջները: Դրա համար «Արմենտելը» զրկվեց եւ բջջային կապի, եւ ինտերնետային ելքի մենաշնորհից», բացատրելով ստեղծված իրավիճակը, ասաց կապի եւ տրանսպորտի նախարարը:

Կ. Դ.

Միացյալ հայկական ֆոնդի 127-րդ օդանավային օգնությունը հասավ Երեւան

Միացյալ հայկական ֆոնդի (ՄՀՖ) Գլենդելի գրասենյակից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ փետրվարի 28-ին ֆոնդի 127-րդ օդանավային օգնությունը հասել է Երեւանի «Զվարթնոց» օդանավակայան, հասցնելով 3 մլն դոլար մարդասիրական օգնություն:

Այդ գումարի 2-3 մլն-ը կազմել են դեղորայքն ու բժշկական սարքերը, որոնց մեծ մասը նվիրվել է Կաթոլիկ բժշկական առաքելության, Միջազգային ուղղակի օգնության եւ «Ամերիքեյր» կազմակերպությունների կողմից: Օժանդակող մյուս կազմակերպություններից կարելի է նշել Հայկական աչքի խնամքի ծրագիրը, Նորֆ-Մարաբ բժշկական կենտրոնը, Կալիֆորնիայից Սերժ Ադամյանի, դոկտ. Մեյրի Ալանի-Ֆոքուս Արմենիայի, Հաուարդ Կարագյոզյան, Շուքի երաժշտական դպրոցի անունները:

Իր սկզբնավորումից ի վեր ՄՀՖ-ն Հայաստան է առաքել 377 մլն դոլարի մարդասիրական օգնություն:

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Դանակահարողը բռնվեց

Ինչպես տեղեկանում ենք ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության օպերատիվ տեղեկագրից, մարտի 2-ին ոստիկանության Վանաձորի բաժին հիվանդանոցից հաղորդվել է, որ կրծքավանդակի, ծնոտի եւ ոտքի մասերում սուր կտրող գործիքից ստացած վնասվածքներով իր բնակարանից հրենց մոտ է տեղափոխվել Նիկոլայ Ա.-ն: Սեկնած օպերատիվ խմբին վերջինս հայտնել է, որ վնասվածքները ստացել է նույն օրն անսպասելի վիճակում Վանաձոր քաղաքի կայարանամերձ թաղամասում վայր ընկնելու հետեւանքով: Ձեռնարկված օպերատիվ միջոցառումների շնորհիվ մարմնական վնասվածք հասցնելու կասկածանքով ոստիկանության բաժին բերման է ենթարկվել 1978 թ. ծնված, նախկինում դատված Սեւակ Ա.-ն: Պարզվել է, որ վերջինս վիճաբանության ժամանակ դանակահարել է Նիկոլայ Ա.-ին: Դանակն առգրավված է: Սեւակ Ա.-ն ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

Զորգի գողը բռնվեց

Մարտի 3-ին ոստիկանության Արաբկիրի բաժին աշխատակիցները «Սամվել Հակոբյան» ՍՊԸ խանութից կողոպուտի փորձ կատարելու պահին բռնել եւ ոստիկանության բաժին բերման են ենթարկել Արմեն Ա.-ին: Վերջինս փորձել է նշված խանութից հափշտակել 3 զորգ: Արմեն Ա.-ն ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

Բնակարանների գողը բռնվեց

Մարտի 3-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնի աշխատակիցները օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնելիս գողություն կատարելու կասկածանքով բերման են ենթարկել Կարեն Ե.-ին: Պարզվել է, որ վերջինս մարտի 1-ին Է. Հ.-ի բնակարանից գողացել է 9 պատատառ եւ 150 հազար դրամ արժողությամբ տեխնիկական իրեր, իսկ Մ. Թ.-ի բնակարանից՝ տեսաձայնագրիչ եւ 600 հազար դրամ ընդհանուր արժողությամբ ոսկյա զարդեր: Գողոնը մասամբ առգրավված է: Կարեն Ե.-ն ձերբակալված է, կատարվում է նախաքննություն:

Մարտի 4-ին հանրապետությունում ձերբակալվել է ՀՀ քր. օր.-ի տարբեր հոդվածների հատկանիշներով հետախուզվող 5 անձ՝ այդ թվում գողության, աղտոտման ծառայության եւ իսկական զինվորական ծառայությունից խուսափելու համար: Նույն ժամանակամիջոցում հանրապետությունում գրանցվել է վրաերթի 2 դեպք, որի հետեւանքով 2 մարդ ստացած տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Լրագրը
ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆԻ

ՀՐԱՏԱԳՈՐԾ

«Ադրբեջանցիները եւ վրացիները միասին կարող են հրաշքներ գործել»

Սկիզբը՝ էջ 1

Մինչ այժմ մեր հարաբերությունները եղել են շատ ջերմ, բայց եւ այնպես, դրա հիմքում եղել է նավթի օգտագործումը», ասել է Սահակաշվիլին, ընդգծելով, որ Վրաստանին Ադրբեջանը հետաքրքրում է որպես վրացական ապրանքների սպառման շուկա եւ հակառակը:

Սահակաշվիլին կարեւորել է Վրաստանի եւ Ադրբեջանի հարաբերությունները Ռուսաստանի հետ: «Մենք հուսով ենք, որ Ռուսաստանը կդառնա ողջ տարածաշրջանի կարեւորագույն իրավահավասար գործընկեր», ասել է Սահակաշվիլին: Ինչ վերաբերում է տարածաշրջանային հարցերին, ապա, ըստ Սահակաշվիլու՝ «մեր տեսակետները երկկողմ եւ տարածաշրջանային բնույթի հարցերում լիովին համընկնում են»:

Բաքու այցի նախօրեին Սահակաշվիլին Ադրբեջանի պետական «Ազերբաջ» գործակալությանն ասել է. «Ես շատ եմ սիրում Ադրբեջանը, եւ այդ մասին ասել եմ իմ բոլոր արտասահմանյան այցերի ընթացքում: Ադրբեջանն ունի այնպիսի նշանավոր առաջնորդ, ինչպիսին է Իլհամ Ալիեւը... Ի դեպ, պետք է ասեմ, որ Ռուսաստանի նախագահը եւս հիացած է Իլհամ Ալիեւով: Նրա մասին բարձր կարծիքի են նաեւ Արեւմուտքում, եւ կարծում եմ, որ Ալիեւի իշխանության գալով Ադրբեջանն ունի երիտասարդ, բայց միեւնույն ժամանակ փորձառու, եռանդուն եւ արհեստավարժ առաջնորդ»:

Սահակաշվիլին, որ Ադրբեջան այցելությունն սկսել էր Հեյդար Ալիեւի գերեզմանին ծաղկեպսակ դնելով, բարձր է գնահատել երկրի նախկին նախագահի ավանդը հարեւան հանրապետությունների հետ «վստահության եւ բարեկամության» հենքով հարաբերությունների հաստատման մեջ: «Հարեւան հանրապետությունների հետ հարաբերությունների մոդելը, որ ստեղծել է Հեյդար Ալիեւը, աշխարհում նմանը չունի: Ես միշտ մտածում եմ, թե ինչպես է այդ նշանավոր մարդը հասել դրան: Նախագահ Իլհամ Ալիեւը հաջողությամբ շարունակում է այդ գիծը, եւ ես ջանում եմ նրանից սովորել», ասել է Վրաստանի նախագահը:

«Աշխարհահռչակ քաղաքագետ Հեյդար Ալիեւը ստեղծեց ադրբեջանական պետականությունը, միավորեց ազգին, ինչը, բնականաբար, իր դերն ունեցավ երկրում իշխանափոխության հարցում», ասել է Սահակաշվիլին: Անդրադառնալով Վրաստանի տարածքով Կասպից Թուրքիա խողովակաշարերի կարեւորությանը, Սահակաշվիլին նշել է. «Վրաստանում եւ նրա սահմաններից դուրս կան ուժեր, որոնք փորձում են խոչընդոտել այդ ծրագրերի իրագործմանը: Բայց նրանք ոչինչ չեն կարող անել, նրանց կպատասխանեն շատ կոշտ քայլերով: Մենք լավ գիտենք, թե ինչ մեծ նշանակություն ունեն այդ նախագծերը ե՛ւ Ադրբեջանի, ե՛ւ Վրաստանի համար»:

Երեկ Բաքվի «Էխո» թերթը գրել էր, որ Վրաստանի ներկա իշխանությունները երկրում բնակվող ադրբեջանցիների հանդեպ որդեգրած իրենց քաղաքականությամբ չեն տարբերվում էդուարդ Շեւարդնաձեից: «Վրաստանը մեր հայրենիքն է» կազմակերպության ղեկավար Ալի Բաբաեւը նշել է, որ Սահակաշվիլին տանում է կադրային մի քաղաքականություն, որի պատճառով Վրաստանում բնակվող ադրբեջանցիները հնարավորություն չեն ստանում զբաղեցնել պետական պաշտոններ:

«Վրաստանի ադրբեջանցիները զայրացած են, որ խորհրդարանական ընտրություններում իշխանական կուսակցության ցուցակներում ընդգրկել են միայն մեկ ադրբեջանցու», ասել է Բաբաեւը նկատելով, որ նույն այդ ցուցակում ընդգրկված են 5 հայեր: «Իսկ եթե հավելենք նաեւ այն հայերին, որոնք ազգանունները փոխել են, ապա գալիս ենք եզրակացության, որ Վրաստանի նոր իշխանությունները Վրաստանում գիտակցաբար ազգամիջյան մթնոլորտը սրում են», ասել է նա:

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Ընդհակառակ խոսք

Անցնող շուրջ 12-15 տարիների ընթացքում երեւան քաղաքում շատ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների հետ եմ շփվել: Արժեքեղված մեր ժամանակներում սովորական է դարձել ղեկավարի անտարբերությունը: Եվ չես էլ զարմանում, երբ փորձելով որեւէ ղեկավարի անհանգստացնել ինչ-որ հարցով, որից ինքն առանձնապես շահ չունի, հանդիպում ես փակ դռների ու քարտուղարության մահաձույլների, կամ էլ լավագույն դեպքում՝ «ժամանակի մեջ չտեղավորվելու» գործնական պատճառաբանության: Բայց ուրախությամբ պիտի փաստեմ, որ մեր օրերում էլ երեւանի շատ հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ պատշաճ հարգանքով ու քաղաքավարությամբ են վերաբերվում իրենց դիմող կարիքավորներին՝ ներս հրավիրում, առաջարկում նստել՝ նրանց հոգսերին ականջ դնում հնարավորինս օգնելու պատրաստակամությամբ, սիրով ու բարությամբ:

Այս առիթով չեմ կարող երախտիս չարտահայտել էրեբունու թաղամասի հարկային տեսչության աշխատող Մանուկյան Լուսինեին եւ էրեբունի թաղամասի թիվ 2 պոլիկլինիկայի բժշկուհի Կոմանդյանին: Ուզում եմ թերթի միջոցով իմ շնորհակալությունը հայտնել նշված ընկերներին:

Ցանկանում եմ նրանց երկար տարիների երջանիկ եւ առողջ կյանք, իղձերի, պլանների եւ ցանկությունների իրականացում: Իրենց կյանքի ուղին լինի հարթ, լայն ու երկար:

ԲԱԲԱՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
Մանկավարժ, ՀՊ-ի II կարգի հաշմանդամ,
աշխատանքի եւ պատ. վետերան

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In Armenian Russian, English, and Turkish

Հայտարարություն

Սիրելի հայրենակիցներ,

Հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի կապակցությամբ Հայաստանում տուրիզմի զարգացման հիմնադրամը եւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման բարեգործական հիմնադրամը համատեղ կազմակերպում են տուրիստական յոթօրյա ճանապարհորդություն Երեւան-Հալեպ-Պալմիրա-Դեր Զոր երթուղով:

Մեկ ուղեգրի արժեքը, որի մեջ մտնում է նաեւ Երեւան-Հալեպ-Երեւան ավիատոմսերի ձեռքբերման ծախսը, կազմում է 360 ԱՄՆ դոլար:

Առաջին խմբի ուղեւորությունը կկայանա 2004 թ. ապրիլի 18-ին:

Ճանապարհորդության մասնակիցները կմասնակցեն դերզորյան Ապրիլի 24-ի ուխտագնացությանը:

Հետաքրքրող հարցերի պատասխաններն ստանալու համար կարող եք զանգահարել 560822, 560497, 583837, 580669, 564555 հեռախոսահամարներով, «Էրեբունի» հյուրանոց, երրորդ հարկ:

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը մարտի 4-ից սահմանվել է տարեկան 18 տոկոս:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀՀ Կենտրոնական բանկը 05.03.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	564.66	559.00	570.30
EUR	1	եվրո	685.89	681.80	690.00
RUR	1	ռուս. ռուբլի	19.70	18.50	20.90

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 04. 03. 2004 Գինը՝ 100 դրամ